



**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ
ԳՈՐԾԻՔԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ**

Երևան
2021

Ք 162 **Քաղաքացիական կրթության կարողունակությունները գնահատելու գործիքը մշակելու ճանապարհին/
Գևորգ Տեր-Գաբրիելյան, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2021 թ. – 64 էջ**



Սույն տեքստը ներկայացնում է Քաղաքացիական կարողությունների արագ գործարկման ստուգաթերթի (ՔԿԱԳ) նախագիծը. նախագիծը կենտրոնանում է չորս առաջնային կարողունակությունների վրա՝ սուբյեկտայնություն կամ «Ռազմավարական Ով», քննադատաան մտածողություն, նախագծային հարացույց և բուն քաղաքացիություն / քաղաքացիության առանցք: Նախագծի նպատակն է՝ դյուրացնել ՔԿԱԳ կարողունակությունների ներդրումը նախ և առաջ ֆորմալ (պետության կողմից հովանավորվող) կրթության ասպարեզում: Տեքստը նախատեսված է ուսուցիչների, սպազա ուսուցիչների, բարձր դասարանների աշակերտների, ծնողների, ուսուցիչներին վերապատրաստողների, կրթությամբ և կրթական հարցերով զբաղվող պետական և ոչ պետական կառույցների և ՀՀ ԿԳՄՍ նախարարության համար:

Տեքստի ստեղծմանը մասնակցել են *Լուսինե Խատարյանը, Նարեկ Մանուկյանը, Միքայել Հովհաննիսյանը, Գիանա Շահբազյանը, Նանե Պասկևիչյանը, Նունե Դիլանյանը (թարգմանիչ)*



Սույն տեքստը մաս է կազմում «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրատարակվող ձեռնարկների շարքի՝ «**Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ**» (ԿՊՄՄԱ) թեմայով: Շարքն ընդգրկում է գրույցներ չորս ծավալուն թեմաների վերաբերյալ.

Քննադատական մտածողություն (ՔՄ)

Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)

Քաղաքացիական հասարակություն (ՔՀ)

Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)

Անգլերեն տարբերակը տես այստեղ.

<https://epfarmenia.am/document/The-Civics-Competence-Rapid-Launch-Checklist>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների բառարան	4
Նախադրյալներ/Համատեքստ	5
ՄԱՍ I. Քաղաքացիական կարողունակությունների արագ գործարկման (ՔԿԱԳ) ստուգաթերթ	9
Քաղաքացիական կարողունակությունների արագ գործարկում (ՔԿԱԳ).....	10
Հավելյալ շրջանակ.....	15
ՔԿԱԳ աղյուսակային տարբերակ.....	19
Զգուշացում.....	21
Լուսավոր կողմը.....	23
ՄԱՍ II. Ավելացված արժեք. ՔԿԱԳ հիմնական «հաստ փոփոխականները»	24
Ավելացված արժեք և «ցանկացած այլը». գիտելիք, հմտություն, դիրքորոշում և արժեք.....	27
Մեծ Պատկերի, ապագայի և իշխանություն մասին. ՔԿԱԳ «մագնիսը».....	31
Ապագայի մասին.....	32
Իշխանության մասին.....	33
Մեծ Պատկերի մասին.....	35
Վերհանման (retrieval) և ռեֆլեքսիայի մասին.....	37
ՄԱՍ III. Բարեփոխումների գործնական մակարդակը. քաղաքացիական կրթություն և ՔԿԱԳ մոդուլներ	41
Փոխկապակցվածության մեթոդաբանություն.....	47
Գրականության համառոտ ցանկ	54
«ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրատարակված այլ նյութեր	57

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

ԿՀԿ	Կարողունակահեն կրթություն
ՔԿԱԳ	Քաղաքացիական կարողունակությունների արագ գործարկում
ԳԹԿ	Գնահատման և թեստավորման կենտրոն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ՔՄ	Քննադատական մտածողություն
ՆՀ	Նախագծային հարացույց
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
ՏԺԳ	Տեղական ժողովրդավարության դպրոց
ՏԻՄ	Տեղական ժողովրդավարական մարմիններ
ՀՀ ԿԳՄՍ	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության նախարարություն

ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ/ՀԱՄԱՏԵՔՍ

Հայաստանյան դպրոցներում քաղաքացիական կրթությանը (citizenship education) առավելագույնս առնչվող նյութը դասավանդվում է «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում: Այս եզրը չի կարելի ճշգրիտ համապատասխանություն համարել, քանի որ այն ուսերեն «обществоведение» բառի թարգմանությունն է և նշանակում է «հասարակության տեսություն»: Հենց այս անվանումն էր կրում քննարկվող առարկան խորհրդային տարիներին: Իմաստային առումով հայերենում *social science*-ին համարժեք է սոցիալական գիտություն/ներ եզրը: Առարկայի ներկայիս տարբերակը քիչ աղերս ունի Մարքսի, Լենինի կամ կոմունիզմի հետ, և, ինչպես ցույց է տալիս մեր վերլուծությունը, այդ առարկայի համար մշակված և ընդունման ենթակա նոր չափանիշները գրեթե ամբողջությամբ, եթե ոչ լիովին, համապատասխանում են քաղաքացիական կրթության պահանջներին: Բացակայում է, թերևս, ուսուցման ծրագիրը կազմելու մեթոդաբանությունը, և, հաշվի առնելով, որ անգամ չափանիշներն են առայժմ գտնվում մշակման փուլում, հարց է ծագում, թե ինչպես վերապատրաստել ուսուցիչներին այդ նոր չափանիշների համաձայն և ինչպես ընդգրկել քաղաքացիական մոտեցումը այլ առարկաների կրթական ծրագրերում: Դպրոցներին՝ որոշակի վերապահումներով, սեփական ուսումնական ծրագրեր մշակելու ազատություն է տրվել: Սակայն, եթե ուսումնական հաստատությունները չդիմեն անհապաղ և վճռական քայլերի, նրանք, ամենայն հավանականությամբ, դուրս չեն գա հնացած ձևաչափերից և միայն մակերեսորեն կհարմարվեն նոր չափանիշներին: Բարդությունը բխում է նաև այն հանգամանքից, որ որպես դպրոցական կրթության հիմնական ուղղություն բարեփոխումները որդեգրել են կարողունակությունների հայեցակարգը, ինչն, անշուշտ, արդիական մոտեցում է: Սակայն ո՛չ Հայաստանում, ո՛չ աշխարհում առայժմ չի համաձայնեցվել կարևորագույն հարցը. ինչպե՞ս չափել այդ

կարողունակությունները և մասնավորապես՝ քաղաքացիական կրթության ոլորտին վերաբերող կարողունակությունները: Մինչև օրս համաձայնեցված սահմանում չի տրվել անգամ «կարողունակություն» հասկացությանը: Ավելին, Նոամ Չոմսկին՝ ժամանակակից լեզվաբանության վրա հսկայական ազդեցություն թողած գիտնականը, տարանջատում է լեզվական կարողունակությունները և դրանց դրսևորումը/կիրառումը խոսքում, այսպիսով առանձնացնելով լեզվի իմանալու և կիրառելու մակարդակները: Մինչդեռ կրթական բարեփոխումների նպատակն է ապահովել երիտասարդներին այնպիսի կարողություններով, որոնց շնորհիվ նրանք կկարողանան գործել թե՛ որպես տեղեկացված քաղաքացիներ, թե՛ որպես գրագետ մասնագետներ, ինչը նշանակում է, որ կարողունակություններին տեսականորեն տիրապետելը չպիտի կտրված լինի կիրառելուց:

Տարբեր կրթական համակարգերի տարբեր՝ միջնակարգ, մասնագիտական և բարձրագույն մակարդակներում կարողունակությունների վրա հիմնված կրթության քննարկումները հարցականի տակ են դնում նաև գնահատման չափանիշների և անգամ գնահատման անհրաժեշտության խնդիրը:

Ինչպես ցույց է տալիս Էվանսի, Լանդլի և Թոմփսոնի (2020)¹ տվյալ հարցի վերաբերյալ տեսական և հետազոտական գրականության սիստեմատիկ, մեթոդաբանորեն համակարգված քննությունը¹, Միացյալ Նահանգների փորձը ենթադրում է. ա) քաղաքացիական կրթությունն ընդգրկում է կարողունակությունների գնահատում և բ) թափանցիկ համանմուշների/ստանդարտների ու չափանիշների առկայություն: Այն օգտագործում է կարողունակահեն կրթության (ԿՀԿ) սահմանումները և փոխկապակցված է ուսուցման այնպիսի մոտեցումների հետ, ինչպիսիք են հմտությունների ապահովումը, երբ սովորողները գնահատվում են անկախ տվյալ նյութը յուրացնելու ժամանակից. հմտությունների կիրառման ապահովումը, երբ շեշտը դրվում է հմտությունները համարժեք ձևով օգտագործելու կարողության վրա. փորձահեն կրթության ապահովումը և արդյունահեն կրթության ապահովումը (ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Միացյալ Նահանգներում կարևորվում է համատեքստի գնահատումը): Այսպես, *Competency-Based Education Models: An Emerging Taxono-*

1 Մ. Էվանսի, Կ. Լանդլի և Ջ. Թոմփսոնի կարողունակահեն կրթության վերաբերյալ հետազոտությունը հասանելի է այստեղ, 2020 թ. <https://onlinelibrary.wiley.com/doi/epdf/10.1002/cbe2.1228>

my (Thackaberry, 2017)² աշխատության մեջ նշվում է, որ Միացյալ Նահանգներում ընդունված են ԿՀԿ հետևյալ բնութագրիչները. ա) ինքնագարգացում/ինքնուրույն առաջընթաց. բ) մոդուլավորում. գ) արդյունավետ գնահատում. դ) կրթության նպատակների հստակ ձևակերպում, որոնց մասին կրթվողները պիտի տեղյակ լինեն. ե) ուսումնական նյութի և ռեսուրսների հասանելիություն ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում, ինչը, մասնավորապես, հնարավոր դարձավ օժանդակ տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ. գ) անհատականացված, ադապտացվող կամ տարբերակված ուսուցում և վերջապես՝ է) սովորողին տրամադրվող խորհրդատվական կամ ուսուցողական աջակցություն: Հարկ է նշել, որ ԿՀԿ սահմանումները տարբերվում են Նիդերլանդներում (Biemans և այլք, 2006), Ֆրանսիայում (Clément, 2020) և Շվեդիայում (Nordin և Sundberg, 2020):

Սույն տեքստով ներկայացվող **ՔԿԱԳ (Քաղաքացիական կարողունակությունների արագ գործարկում)** ստուգաթերթը կատարելագործելիս այս հարցը կուսումնասիրվի և արդյունքները կառաջարկվեն կրթական համակարգին:

Հետևելով *Evaluating the assessment quality in competence-based education: A qualitative comparison of two frameworks* (Baartman et al., 2007) աշխատության մեջ առաջարկված մոտեցմանը՝ մենք որդեգրել ենք կարողունակությունների ձևավորման առավել տարածված եղանակը, որն ընդգրկում է «գիտելիք», «հմտություններ» և «դիրքորոշումներ» բաղադրիչները, համալրելով այդ շարքը Հայաստանի կրթական բարեփոխումների շրջանակներում հաստատված ևս մեկ չափանիշով՝ արժեքներով (տես, մասնավորապես՝ **Մաս երկրորդ. գիտելիք, հմտություններ, դիրքորոշումներ և արժեքներ** բաժնում): Հարկ է նշել, սակայն, որ հարցականի տակ է մնում, թե ինչպես են այդ հասկացությունները կապակցվում թե՛ միմյանց, թե՛ կարողունակությունների հետ: Իրավիճակի լրացուցիչ բարդությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մանկավարժական հոգեբանության ոռուսական/խորհրդային ավանդության շրջանակներում գիտելիքն ու հմտությունն ընդգրկում են երեք հասկացություններ, որոնք սահմանվում են որպես *знание, умение и навык* (գիտելիք, կարողություն և հմտություն): Ըստ այդ մոտեցման՝ գիտելիքը

2 «Կարողունակահեն կրթության մոդելներ. ի հայտ եկող տաքսոնոմիա» հետազոտությունը հասանելի է այստեղ, 2017 թ. https://etd.ohiolink.edu/apexprod/rws_olink/r/1501/10?clear=10&p10_accession_num=kent1491776906336325

ստացված, ընկալված և պահված տեղեկատվությունն է, կարողությունը՝ այդ տեղեկատվության համաձայն գործելու ունակությունը, իսկ հմտությունը՝ գիտելիքը ազատորեն, առանց նկատելի ջանքերի վերհանելու և կիրառելու ունակությունը: Անգլերենում *умение* հասկացությունը չունի իր համարժեք բառաձևը (բացառություն է կազմում, թերևս, 'knack' բառը, որը, սակայն, ոճաբանորեն տարբերվում է³): Այն նշանակում է գիտելիքի կիրառմանը տիրապետելու կարողություն, որը դեռ հմտություն չի դարձել, այսինքն՝ չի ավտոմատացվել, իր օգտագործումը պահանջում է գիտակցության ներդրում: Եվ ահա՝ զոհաբերելով այդ հասկացությունը, շատ ուսուցիչներ հայտնվում են մեթոդաբանական խնդրի առջև՝ չհասկանալով, թե ինչպես լրացնել այդ բացը, ինչպես սահուն ձևով անցնել գիտելիքից հմտությունների, այսինքն՝ գիտելիքի ազատ, ավտոմատացված, վարժ կիրառմանը:

Աշակերտները սկսում են ուսումնասիրել «Հասարակագիտություն» առարկան 13 կամ 14 տարեկանում՝ 7-րդ դասարանում: Հետևաբար, նախորդ տարիների ուսումնական ծրագրերի շրջանակներում պիտի գտնվեն այն առարկաներն ու թեմաները, որոնք թույլ կտան ընդգրկել քաղաքացիական կրթությանն առնչվող ներածական նյութեր: Բացի այդ՝ գյուղական դպրոցներից շատերում ավագ դպրոցի (10-12 դասարանների) բացակայությունը նշանակում է, որ աշակերտների մի ստվար խումբ զրկված է քաղաքացիական կրթության հիմունքները յուրացնելու հնարավորությունից: Այս բացը կարելի է լրացնել ինչպես ոչ ֆորմալ կրթության, այնպես էլ քոլեջների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ աշխատելու միջոցով:

3 Բառացիորեն *умение* հասկացությունը թարգմանվում է որպես *mastery*, սակայն ուսական կրթական խոսույթում այն նախորդում է *skill* հասկացությանը, որը ավելի բարձր կարգի ձեռքբերում է համարվում: *Умение* հասկացությանը մոտ է նաև *proficiency* եզրը:

ՄԱՍ I.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԱԳ

ԳՈՐԾԱՐԿՄԱՆ (ՔԿԱԳ) ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

Հաշվի առնելով, որ հանրակրթական համակարգի բարեփոխումները շեշտում են բազմազան քայլեր ձեռնարկելու հրամայականը, ինչպես նաև Հայաստանի տարածքում օրեցօր շատացող երիտասարդական նախաձեռնությունների առկայությունը, մենք մեծապես կարևորում ենք երիտասարդներին, ուսուցիչներին և կրթության ոլորտում որոշում կայացնող անձանց պարզեցված գործիքակազմ տրամադրելու անհրաժեշտությունը, ինչը թույլ կտա նրանց արագ գնահատել քաղաքացիական կրթության մակարդակը և դիրքավորումը կրթական ծրագրերում: Այդ գործիքը համեմատաբար հեշտ բացատրություն կտա մանկավարժներին և երիտասարդությանը, թե ինչպես արագորեն ընդգրկել քաղաքացիական կրթության բաղադրիչը իրենց գործունեության մեջ, իսկ ամբողջական մշակումից հետո կարող է ծառայել նաև որպես ուղեցույց՝ ամբողջ երկրում քաղաքացիական կարողունակությունների չափման համապարփակ համակարգ ստեղծելու համար, որը կկիրառվի պետության և/կամ անկախ սուբյեկտների կողմից: Գնահատման և թեստավորման կենտրոնը (ԳԹԿ) կկարողանա օգտագործել այն դպրոցների բոլոր շրջանավարտների կարողունակությունները չափելու և գնահատելու համար: Ներկայումս գնահատվում է միայն «հորիզոնական գիտելիքը», օրինակ՝ լեզվի կամ պատմության իմացությունը, մինչդեռ այս գործիքը հնարավորություն կտա չափելու նաև «ուղղահայաց կարողունակությունները», այսինքն՝ այն կարողունակությունները, որոնք ձեռք են բերվում ուղղահայաց՝ բոլոր մակարդակները ներթափանցող սկզբունքով և բխում են դպրոցական կրթության ամբողջական համակարգից: ՔԿԱԳ ստուգաթերթը մշակվել է

Հայաստանի հանրակրթական բարեփոխումներին վերաբերող բոլոր հասանելի նյութերի, միջազգային լավագույն փորձի վերլուծության, ինչպես նաև ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ոլորտներում փորձագետների և մասնագետների՝ քաղաքացիական կրթության զարգացմանն ուղղված բազմամյա գործունեության հիման վրա: Ներկայացվող մոտեցումը բխում է բազում կրթողների և հետազոտողների փորձից, նրանց որդեգրած մեթոդներից և ուսումնասիրած գրականությունից:


ՔԿԱԳ նպատակն է համադրել և հնարավորինս միավորել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության խնդիրները՝ կիզակետում դնելով քաղաքացիական կրթության կարիքը: Այս մոտեցումը կարող է մեկնաբանվել որպես ոչ ֆորմալ կրթության շրջանակներում ձեռք բերված լավագույն փորձի ներդրում ֆորմալ կրթության մեջ. չէ որ վերջինս ակնհայտ դժվարություններ ունի առարկայական ուսուցումից կարողունակությունների վրա հիմնված ուսուցմանն անցնելու հարցում:

Ստորև բերված գծապատկեր 1-ը ներկայացնում է այդ գործիքի կմախքը, որը առայժմ գտնվում է խմորման փուլում և կլրանշակվի հետագայում, նաև սույն նյութի քննարկումների շնորհիվ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԱԳ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ (ՔԿԱԳ)

Հայաստանի Հանրապետության հանրակրթական համակարգի բարեփոխումների շրջանակներում սահմանվել են ութ լայնածավալ և բարդ կարողունակություններ, որոնց պետք է տիրապետի դպրոցի շրջանավարտը: Դրանցից մեկը քաղաքացիական կարողունակությունն է, որի հետ այս կամ այն չափով կապված են մնացած բոլորը: ՔԿԱԳ մոտեցումը դիտարկում է քաղաքացիականը որպես լայնածավալ, խորը և բարդ կարողունակություն և սահմանում է ևս երեք կարողունակություններ պահանջող ոլորտներ: Սրանք վերաբերում են ոչ թե տվյալներին, նյութերին և տեղեկատվությանը, որոնց պիտի տիրապետի սովորողը, այլ այն մեթոդներին, որոնք նա, ինչպես նաև նրան կրթողները, պիտի կիրառեն այդ նախապես առկա տվյալների, նյութերի և տեղեկատվության նկատմամբ (օրինակ՝ օգտագործելու համար): Կարողունակությունների այդ չորս հիմնարար, փոխկապակցված և փոխլրացնող ոլորտները, որոնցում գիտելիքը և հմտությունները արժևորվում և կապիտալացվում

Գծապատկեր 1. Քաղաքացիական կարողությունների արագ գործարկում (ՔԿԱԳ)



են ոչ թե հրահանգչական, այլ մասնակցային, միմյանց փորձը «արթնացնելու» եղանակով, միասնաբար կիրառվելու պարագայում զարգացնում և արմատավորում են քաղաքացիական կարողունակությունները:

Դրանք հետևյալ չորս կարողունակություններն են.

- 1. Սուբյեկտայնություն՝** որոշումների կայացում և իրագործում. առաջնորդություն, ռազմավարական «Ով»՝ հասկացության լայն իմաստով: Այս ամենը կապված է բազմազան հմտությունների հետ. պլանավորում, կազմակերպում, ֆասիլիտացիա, բանակցում, թիմային աշխատանք, սոցիալական հմտություններ և այլն:
- 2. Նախագծային հարացույց՝** նախագծահեն ուսուցում, նախագծահեն մոտեցում կյանքի նկատմամբ: Սա ընդգրկում է «նախագծային քերականությունը», այն է՝ սահմանել նպատակներն ու խնդիրները, ակնկալվող արդյունքներն ու գործողությունները, համալրել այդ «քերականությունը» սուբյեկտի (ով է անելու), ռեսուրսների, ռիսկերը գնահատելու, ճկունություն դրսևորելու, գործելով սովորելու կատեգորիաներով: Սա նշանակում է նաև գործունեության ընթացքում կիրառել այսպես կոչված «ֆրակտալ» մոտեցումը, երբ նախագծի իրականացման գործընթացը ենթադրում է նախագծի զարգացում և երբ այդ գործընթացը ինքնին նախագիծ է, որի հիմքում ընկած է նույն «քերականությունը»: Հայաստանում իրականացվող հանրակրթական բարեփոխումների համատեքստում այս կարողունակությունը գերակա դիրք է գրավում:
- 3. Քննադատական մտածողություն.** այս կարողունակությունը վերաբերում է գիտելիքի և հմտությունների կիրառմանը ամենատարբեր ոլորտներում, օրինակ՝ մարդու իրավունքների հետ կապված ամբողջ տիրույթում, գենդերային⁴, բնապահպանական և այլ ոլորտներում: **Այն արմատացած է մարդու սուբյեկտիվ հատկության մեջ՝ իշխանության արդարության / անարդարության, իրավականության / անիրավության աստիճանը «չափելու» կարողության: Համեմատելը, որպես մարդու աշխարհաճանաչողության և աշխարհընկալման կարևորագույն կիրառուկ, ինքնին ստիպում է մարդուն՝ զգալ, երբ բալանսը խախտված է, լինի դա արդարության խախտման թե այլ առիթով:**

4 Տե՛ս քննադատական մտածողությունից բխող մոտեցումը գենդերային խնդիրներին այստեղ. <https://epfarmeria.am/hy/document/EPF-Gender-Policy>

Քննադատական մտածողությունն ընկած է նաև տեքստերի ընկալման և ընդհանուր առմամբ՝ մեղիագրագիտության հիմքում⁵, այն կարողունակությունների հիմքում, որոնք թույլ են տալիս ճանաչել կեղծ լուրերը, լրատվական սադրանքները, նենգափոխումները, չարամիտ ազդեցությունները և դավադրության տեսությունները: Այս կարողունակությունը զարգացնում է նաև սուրբեկտի՝ սովորելու կարողությունը (համաձայն ՀՀ **պետական չափորոշիչների**՝ «սովորել սովորելու կարողունակությունը»), տեղեկատվությունը մշակելու միջոցով ամբողջ կյանքի ընթացքում աշխարհայացք ձևավորելու կարողությունը, հարցեր տալու կարողությունը, բնապահպանմանն առնչվող խնդիրներ առաջ քաշելու կարողությունը և այլն: Այն, ինչպես և մնացած կարողունակությունները, բավարարում է ինքնակարգապահության պահանջը (ցանկությունները առաջ քաշել միայն պատշաճ պահին, ծրագրել, թե անհրաժեշտության դեպքում ինչպես օգնել ուրիշներին՝ դրանով իսկ կապվելով 1 և 4 կարողունակությունների հետ): Քննադատական մտածողությունը օգնում է ձեռք բերել իրատեսական աշխարհայացք, գնահատել գիտությունը, տարբերակել կյանքի նկատմամբ գիտական մոտեցումն այլ կարգի մոտեցումներից՝ կարծիքներից, ավանդական արժեքներից, կրոնական հայացքներից և այլն՝ այդպիսով նաև կազմելով ապացուցահեն հետազոտական կարողությունների հիմքը: Հայաստանյան դպրոցական բարեփոխումների ցանկում այս կարողունակությունը կարևորագույն տեղ է զբաղեցնում:

4. Բուն քաղաքացիականություն/Քաղաքացիականության առանցք. սա նշանակում է հասկանալ, թե ինչ ասել է քաղաքացիական կեցվածք և ինչպես է այն դրսևորվում, ի տարբերություն այն արարքների, այն գործունեության, որն իրականացվում է «հանուն շահույթի», «հանուն մտերիմների և սիրելիների» կամ հանուն «խաղի կանոնների» / պոպուլիզմի վրա հիմնված պետական և քաղաքական կարիերայի: Այն ընդգրկում է սոցիալականացմանն ուղղված կարողունակություններ՝ մանիպուլյացիայի բացակայություն սեփական վարքում, քաղաքացի լինելու համար անհրաժեշտ հմտություններ, հակամարտություններից և բռնի բախումներից խուսափելու և/կամ դրանք լուծելու կարողություն, դարձյալ՝ ֆասիլիտացիայի հմտություն և **Սուրբեկտայության** հետ կապված այլ հմտություններ, ինչպես նաև «հանրային», «հասարակամետ» կարողություններ՝ քաղաքացիություն, ի շահ համայնքի և հասարակության գործելու կարողություն: Ամենալայն իմաստով դա նշանակում է արժևորել

5 Տե՛ս տեքստերը մեկնաբանելու ուղեցույցն այստեղ. <https://epfarmenia.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>

մարդկությունը և սեփական անձը (ինչպես նաև սեփական համայնքն ու հանրությունը)՝ որպես այդ մարդկության, կամ, ավելի լայն առումով՝ կենսաաշխարհի մաս: Այս կարողունակությունները տեղ են գտել ինչպես հայաստանյան դպրոցական բարեփոխումների շրջանակում, այնպես էլ ԵԽ ձեռնարկում և մի շարք այլ փաստաթղթերում:

ՔԿԱԳ նախագիծն ամենևին նպատակ չի հետապնդում «տեղավորել» ժամանակակից քաղաքացու համար անհրաժեշտ բոլոր կարողունակությունները վերը նշված չորս ոլորտներում, սակայն ակնհայտ է, որ դրանց համադրության պարագայում կբարելավվեն նաև մի շարք լրացուցիչ կարողունակություններ: Օրինակ, նախագիծ մշակելու կարողունակությունը, եթե «դրական» արդյունքի է ուղղված (այսինքն համապատասխանում է Քննադատական մտածողության և Բուն քաղաքացիության արժեքներին), խթանում է ստեղծագործական և նորարարական կարողությունները, որոնք զարգանում են նաև մյուս երեք կարողունակությունների շնորհիվ, քանի որ, ասենք, որոշում կայացնելու գործընթացը պահանջում է հենվել ուղեղային գրոհ կազմակերպելու ունակության վրա, և այլն: Քննադատական մտածողությունը առաջ է քաշում երևակայությունը զարգացնելու պահանջը, իսկ, օրինակ, հանրօգուտ գործունեություն իրականացնելիս անհրաժեշտ է «թոչունի բարձրությունից» դիտել հասարակությունը, այսինքն՝ կարողանալ տեսնել ընդհանուր նկարագրիչներն ու միտումները և հստակեցնել առաջնահերթությունները՝ դրանց միջև ճիշտ ընտրություն կատարելու համար:

Այս կարողունակություններն ունեցող անձը, որը նաև գիտակցում է դրանց միջև կապերը, չի կարող չգիտակցել, որ տիրապետում է դրանց, և աշխատում է լրացնել ու կատարելագործել դրանք, իսկ գիտակցելով, որ դրանք նվաճվել են իր կենսափորձի շնորհիվ, նա ձեռք է բերում նաև ռեֆլեքսիվ մտածողության և սովորել սովորելու կարողունակություն:

Նշված չորս կարողունակությունների վրա հիմնված ստուգաթերթը պիտի լրամշակվի և առաջարկվի բոլոր շահագրգիռ կողմերին: Ստուգաթերթը պիտի նախագծվի այնպես, որ կարողանա ծառայել թե՛ որպես գնահատման գործիք, թե՛ որպես գործողությունների ուղեցույց: Այն հնարավոր կլինի օգտագործել հետևյալ եղանակներով.

1. Ծրագրված նախագիծը մշակելու համար: Դա կարող է լինել առանձին առարկա, առանձին դաս կամ արտադասարանային նախագիծ, օրինակ՝ բնապահպանական նախագիծ, դպրոցի կառավարման նախագիծ և այլն: Փորձեք պատասխանել

հետևյալ հարցերին. ա) Չորս կարողունակություններից ո՞րը առաջխաղացում կգրանցի նախագծի իրագործման ընթացքում. բ) Ի՞նչ աստիճանի. գ) Ի՞նչու՞ եք այդպես կարծում (ներկայացրեք փաստարկ կամ ձեր անձնական կարծիքը):

2. Եթե ունեք նախագծային գաղափար, օգտագործեք այս Ստուգաթերթը՝ ընդունելով ՔԿԱԳ-ը որպես նախագիծը մշակելու հիմք:
3. Եթե դուք գտնվում եք նախագծի իրականացման փուլում, կանգ առեք և փորձեք հասկանալ. արդյո՞ք ձեր նախագիծն ընգրկել է նշված չորս կարողունակությունները: Եթե չի ընդգրկել, ապա ի՞նչու՞: Եթե ընդգրկել է, ապա ո՞րը և ի՞նչ ծավալով: Ի՞նչպե՞ս կարող եք ուժեղացնել այդ բաղադրիչը՝ փոփոխություններ մտցնելով իրագործման գործընթացում:
4. Եթե նախագիծն ավարտված է, գնահատեք այն՝ հիմնվելով այս Ստուգաթերթի վրա, սահմանեք ապագայի համար քաղված դասերը և առաջարկեք բարելավումներ՝ նման նախաձեռնությունների համար:
5. Եթե դուք մշակում եք մեթոդական ձեռնարկ, օրինակ՝ ինչպես մատուցել ուսումնական նյութը կամ նախագծահեն մոտեցման սկզբունքները, օգտագործեք կարողունակությունների Ստուգաթերթը՝ օգտվելով 1 և 2 կետերի մոտեցումից:
6. Եթե դուք գնահատում եք մեթոդական նյութը, օգտագործեք կարողունակությունների Ստուգաթերթը՝ օգտվելով 3 և 4 կետերի մոտեցումից:

ՀԱՎԵԼՅԱԼ ՇՐՋԱՆԱԿ

Սա Քաղաքացիական մոտեցման արագ գործարկման Ստուգաթերթն է, որի հիմնական նպատակն է ցույց տալ կրթվողին, կրթողին, հետազոտողին կամ կրթության ոլորտում որոշում կայացնողին, թե ինչպե՞ս է կարելի արագորեն և առանց դժվարության՝ ա) համապատասխանեցնել կատարվող աշխատանքը քաղաքացիական կրթության պահանջներին և/ կամ՝ բ) ստուգել, թե որքանով է կատարվող աշխատանքը համապատասխանում քաղաքացիական կրթության պահանջներին: Բնավ չի ենթադրվում, որ այս Ստուգաթերթն ընդգրկում է քաղաքացիական կրթության բոլոր բաղադրիչները կամ որ այն բավարարում է ուսուցմանը, կրթությանը, գիտելիքին, հմտություններին, մոտեցումներին, արժեքներին և կարողունակություններին վերաբերող բոլոր պահանջները: Այդ

պատճառով կարողունակությունների չորս ոլորտներին մենք ավելացրել ենք հինգերորդը՝ «դատարկը», չլրացվածը՝ անվանելով այն «ցանկացած այլը» (տե՛ս Գծապատկեր 1): Եթե 1. – 6. Կետերը կիրառելիս ի հայտ գան հարցեր կամ խնդիրներ, որոնք կապված չեն կամ թվում է թե կապված չեն չորս կարողունակություններից որևէ մեկի հետ, լրացրեք այս շրջանակը և խորհրդակցեք ՔԿԱԳ թիմի հետ: Չի բացառվում, որ կարող է գոյություն ունենալ չափազանց կարևոր կարողունակություն, որը չի զարգանում նշված հմտություններից և ո՛չ մեկի հիման վրա, կամ կարող են լինել հմտություններ, որոնք բխում են ոչ թե նշված չորս, այլ մեկ այլ կարողունակությունից, թեև պետք է նշել, որ Ստուգաթերթի ճիշտ կիրառման պարագայում դրա հավանականությունը փոքր է: Եկեք դիտարկենք մի հնարավոր և բավականին հետաքրքիր խնդիր ներկայացնող օրինակ: *Ապրումակցումը (էմպաթիան)* հաշվի է առնվում ինչպես սուբյեկտայնությունը, այնպես էլ քննադատական մտածողությունը զարգացնելիս: Սակայն երբ դու հակամարտության կողմերից մեկն ես (ինչպես Հայաստանի դեպքում), հակամարտությունների լուծման հմտությունների բացակայությունը դառնում է կարևորագույն խնդիր: Նման պարագայում ապրումակցման հետ մեկտեղ պահանջվում է մեկ այլ հմտություն, որը կարելի է ձևակերպել որպես «քեզ ուրիշի տեղը դնելու» ունակություն: Սա պարզապես ապրումակցում չէ, երբ դու կարեկցում ես մեկին, միևնույն ժամանակ պահպանելով քո ինքնությունը: Դնելով քեզ ուրիշի տեղը՝ դու օտարվում ես քո ինքնությունից և փորձում ես գնահատել իրավիճակը ուրիշի դիրքից, ուրիշի տեսանկյունից, ո՛չ միայն հասկանալ այդ ուրիշին, այլ տեսնել նրան՝ հաղթահարելով ինքնությունիցդ բխող արգելքները: ՔԿԱԳ Ստուգաթերթում բերված չորս կարողունակություններից և ոչ մեկը բավարար չափով չի անդրադառնում «քեզ ուրիշի տեղ դնել» սովորելու հմտությանը, ինչը նշանակում է, որ այն պետք է դառնա հատուկ ուշադրության առարկա:

Մասնակցայնության և առաջնորդության փոխկապվածությանն անդրադառնալիս պետք է ուշադրություն դարձնել մեկ այլ նրբերանգի վրա: Թեև այս երկու կարողությունները փոխկապակցված են, հատուկ կարգապահություն է պահանջվում թիմային աշխատանքին լիարժեք և կառուցողական մասնակցություն բերելու համար, միաժամանակ թույլ տալով ուրիշներին իրենց վրա վերցնել վերջնական որոշումը կայացնելու պատասխանատվությունը, սակայն և՛ դարձյալ կառուցողական ձևով, վերահսկելով նրանց գործողությունները: Թիմ ստեղծելու

առումով այս հմտությունը էական դեր է խաղում:

Նման հակասություն կա նաև *պարպրադիր կենտրոնացման* կողմնակիցների (այսպես կոչված «ճանաչողական անցման տուգանքը»՝ այն գինը, որ վճարվում է մի թեմայից մյուսին «թռչելու» համար» (Kaufman, 2010)⁶) և այն մոտեցման միջև, ըստ որի նման «թռիչքային» անցումները նպաստում են ուսուցմանը (Brown և այլք, 2014): Վերջինիս պնդմամբ, երբ սովորողը, այս կամ այն նյութը լիովին չյուրացնելով, անցնում է մեկ այլ նյութին, իսկ որոշ ժամանակ անց վերադառնում նախորդին՝ այն գրանցվում է երկարատև հիշողության *էքսպլիցիտ* (արտիկոլացվելիք, բացահայտ, հոդաբաշխ, ձևակերպված) մասում: Այս հակասությունը բխում է յուրացվելիք տեղեկատվության տարբեր ոլորտները շփոթելուց: «Անցման տուգանքը» տարածված երևույթ է ժամանակակից թվային աշխարհում, որը բնորոշվում է ուշադրության ապակենտրոնացմամբ: Սակայն *միջանկյալ անցումը* նշանակում է ոչ թե «շրջել» մի քանի նյութերի միջև, այլ, արդեն կենտրոնացած լինելով մեկ նյութի վրա, տեղափոխվել մեկ այլ նյութի ուսումնասիրությանը: Ըստ «անցման տուգանք» հասկացության հեղինակ Ջոշ Կաուֆմանի՝ այս խնդիրը լուծելու ձևերից մեկը կարող է դառնալ «նախնական շարումը»: Կարելի է ասել, որ դա համակարգման առաջին քայլն է, երբ տեղեկատվությունը խմբավորվում է առաջին իսկ հայացքից նկատելի նմանությունների և տարբերությունների հիման վրա, անկախ դրանց էական լինելուց: «Նախնական շարման» մոտեցումը, անշուշտ, նպաստում է սովորելուն, սակայն, կարծես թե, ավելի մեծ օգուտ է տալիս դրանից հետո կատարվող «միջանկյալ անցումը»: Թե ինչու է դա այդպես, կքննարկվի ստորև (տես Մաս երկրորդ՝ Մեծ Պատկեր):

Բերված օրինակները ցույց են տալիս, որ նման նրբերանգներ դիտարկելու համար ՔԿԱԳ կարողունակությունների շրջանակներում կամ դրանցից դուրս անհրաժեշտ է լրացուցիչ «տարածք» ունենալ:

Այս մոտեցումից պարզ է դառնում, որ ՔԿԱԳ գործիքակազմը կարող է կիրառվել ինչպես քաղաքացիական կրթության՝ որպես առանձին առարկայի (գիտակարգի և այլն) համար, այնպես էլ գործունեության ցանկացած՝ քաղաքացիականության հետ կապված կամ չկապված բնագավառում (առարկա, գիտակարգ)՝ լինի դա մաթեմատիկա թե սպորտային նախագիծ, անձնական կարիերային վերաբերող

6 Ամեն անգամ, երբ դուք շեղում եք ձեր ուշադրությունը մեկ նյութից մյուսի վրա, ձեր ուղեղը «տուգանում» է ձեզ, քանի որ ժամանակ և էներգիա է կորցնում նոր նյութը ներբեռնելու համար, ինչը նրանից լրացուցիչ «լիցքավորում» է պահանջում:

ծրագիր, ՀԿ նախագիծ թե երիտասարդական կամավորական գործունեություն: Որոշ դեպքերում այդ կարողունակությունների մի մասն ավելի նկատելի առաջխաղացում կգրանցի, քան մյուսը: Օրինակ, մաթեմատիկական պահանջում է մի շարք նախնական կարողունակություններ, սակայն 1-3 կարողունակությունների կարևորությունը որևէ կասկած չի առաջացնում: Անգամ 4-րդն է կարևոր, քանի որ այսօր նա, ով մաթեմատիկայի գլոբալ ցանցի մաս չի կազմում, դժվար թե կարողանա էական հաջողություններ գրանցել գիտության այդ ոլորտում: Նույնը վերաբերում է սպորտին. հանրությանը (օրինակ՝ երկրիդ) ծառայելու հպարտության զգացումն ու թիմային աշխատանքը նույնքան կարևոր են, որքան կարողանալ գնահատել, կհաղթահարի՞ արդյոք մարզիկը առաջարկված քաշը կամ՝ ինչպես պլանավորել մարզումներն ու ապրելակերպը:

Անհրաժեշտ է շահագրգիռ կողմերին ապահովել հնարավորությամբ (դասընթացներով և այլն)՝ կողմնորոշվելու և հասկանալու համար, թե ինչպես սկսել քաղաքացիական կրթության ինստիտուցիոնալացման գործընթացը, օրինակ՝ օգտագործելով ՔԿԱԳ-ը որպես գործիք, մեկնաբանելով այն, միգուցե նույնիսկ սկսելով այդ գործիքից և այլն: Ի թիվս Եվրոպայի խորհրդի՝ ժողովրդավարական մշակույթի համար կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակի և ռազմավարական այլ նյութերի ՔԿԱԳ-ը կհամալրի հիմնարար մեթոդաբանական գործիքների ցանկը: ՔԿԱԳ-ն ավելի մշակված, բանակցային եղանակով համաձայնեցված ստուգաթերթի սաղմն է, որն անհրաժեշտ է լրամշակել և ինստիտուցիոնալացնել՝ Հայաստանում հանրակրթական բարեփոխումների, կառավարության, ոչ կառավարական և միջազգային կազմակերպությունների գործունեության արդյունքում իրականացվող քաղաքացիական կրթության գործընթացը ուղղորդելու, չափելու և գնահատելու համար:

Աղյուսակ 1.

ՔԿԱԳ ԱՂՅՈՒՍԱԿԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Ինդիքում ենք գնահատել, թե ձեր գործունեությունը որքանով է նպաստում կարողունակությունների ձևավորմանը: Օգտագործե՛ք 1-10 սանդղակը, որտեղ 1-ը նշանակում է նվազագույն աստիճանը: Եթե ցածր աստիճան է գրանցվել, մտածե՛ք, թե ինչպես է կարելի բարձրացնել այն՝ բարելավելով ձեր գործունեությունը:

Միավորները պայմանական են, և թվային գնահատումը պարտադիր պայման չէ: Կարող եք պատասխանել բառերով և/կամ միավորել թվերն ու մեկնաբանությունները:

Աղյուսակ 1. ՔԳԿԿԳ Աղյուսակային Տարբերակ

Կարողունակություն	ԿԻՐԱՌՆԵՔ/ՄՏՈՒԳԵՔ						
	Կիրառելի ծրագրված նախագծի վրա	Մշակեք գաղափարահան նախագիծ	Գնահատեք նախագիծը/ նախագծի մասը իրականացման միջանկյալ փուլում	Գնահատեք նախագիծը	Կիրառեք նախագիծ իրականացնելու մասին նախագիծ մշակելու համար (օրինակ՝ մեթոդական նյութ/մեթոդ)	Գնահատեք նախագծի մասին նախագիծը (օրինակ՝ ուսուցման մեթոդը)	Այլ կիրառումներ
1. Առաջնորդություն / Մոլիեկտայնություն							
2. Քննարատական մտածողություն							
3. Նախագծային հարացույց							
4. Բուն քաղաքացիականություն / Քաղաքացիականության առանցք							
5. Ցանկացած այլը							
Ենթաարդյունքներ							

ՔԿԱԳ-ը կիրառելու համար պատասխանեք ստորև բերված հարցերին՝ հաշվի առնելով, որ առաջին շարքը (շարք *ա*) ուղղահայաց է երկրորդին (շարք *բ*):

1ա. Կարելի է ասել, թե ոչ, որ նախագծի /մոտեցման/մեթոդի/ գործիքի ստեղծման/գնահատման/ ծրագրման ընթացքում կիրառվել/ օգտագործվել/ իրականացվել է քննադատական մտածողություն:

1բ. Կարելի է ասել, թե ոչ, որ նախագծի/մոտեցման/մեթոդի/ գործիքի կիրառման ընթացքում/կիրառման միջոցով այն կատարելագործվել է/զարգացել է:

2ա. Կարելի է ասել, թե ոչ, որ նախագիծը/մոտեցումը/ մեթոդը/ գործիքը ստեղծելիս/գնահատելիս/ծրագրելիս/կիրառելիս առաջնորդության (սուբյեկտայնության) կարողունակությունը բավարար չափով հաշվի է առնվել:

2բ. Կարելի է ասել, թե ոչ, որ նախագծի/մոտեցման/մեթոդի/ գործիքի կիրառման ընթացքում/կիրառման միջոցով այն կատարելագործվել է/զարգացել է:

3ա. Կարելի է ասել, թե ոչ, որ նախագծի/մոտեցման/մեթոդի/ գործիքի ստեղծումը/ծրագրումը/գնահատումը/իրականացումը ուղղորդվել է Նախագծի հարացույցով:

3բ. Կարելի է ասել, թե ոչ, որ նախագիծը/մոտեցումը/մեթոդը/ գործիքը կիրառելու/իրականացնելու ընթացքում/միջոցով կատարելագործվել/զարգացել է նախագիծ ծրագրելու, մշակելու և իրագործելու կարողունակությունը:

4ա. Կարելի է ասել, թե ոչ, որ նախագիծը/մոտեցումը/ մեթոդը/ գործիքը ստեղծելիս/ գնահատելիս/ծրագրելիս/կիրառելիս քաղաքացիական կարողունակությունները բավարար չափով հաշվի են առնվել:

4բ. Կարելի է ասել, թե ոչ, որ նախագծի/մոտեցման/մեթոդի/ գործիքի կիրառման ընթացքում/կիրառման միջոցով այդ կարողունակությունները կատարելագործվել /աճել են:

Վարժության օրինակ


Համեմատեք երկու նախագծեր, որոնցից մեկը ՔԿԱԳ գնահատման սանդղակում բարձր տեղ է զբաղեցրել, մյուսը՝ ցածր: Ի հայտ բերեք տարբերության պատճառները: Օգտագործեք արդյունքները՝ լավագույն փորձը կիրառելու և ձեր ծրագրի ՔԿԱԳ միավորները բարձրացնելու համար:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Հնարավոր են իրավիճակներ, երբ սովորողները գիտեն քաղաքացիական կրթության համատեքստում օգտագործվող «մոդայիկ» բառերի իմաստները, օրինակ՝ «նախագիծ», «կարողությունների զարգացում» կամ «շահերի պաշտպանություն», սակայն կարողունակությունների նախորդ մակարդակներում էական բացթողումներ ունեն: Նրանք կարող են տիրապետել փաստեր ստուգելու մեթոդներին, ինչն, անշուշտ, քննադատական մտածողության կարևոր բաղադրիչն է, սակայն անտեղյակ լինեն տրամաբանության դասական կանոններից, քանի որ Հայաստանի դպրոցներում «Տրամաբանություն» առարկան չի դասավանդվում⁷: Կամ՝ նրանց կարող է թվալ, որ իրենց մշակած նախագիծը համապատասխանում է նախագծային «քերականության» օրենքներին, թեև իրականում այն կառուցված է ցանկալիի, սակայն ոչ հնարավորի վրա, ուստի չի կարող իրագործվել: Եթե նրանք չեն ուսումնասիրել, թե ինչով է գիտությունը տարբերվում գիտելիքի այլ տեսակներից, ամենայն հավանականությամբ, կշիռթեն փաստացի ապացույցները լուրերի հետ և/կամ կփորձեն խեղաթյուրել տվյալները՝ իրենց նախնական վարկածին համապատասխանեցնելու համար: Նման վտանգների մեծ հավանականությունը բացատրվում է, մասնավորապես, այն հանգամանքով, որ Հայաստանի ներկայիս կրթական համակարգի ամենաբնորոշ թերություններից մեկը գրագողության տարածվածությունն է: Ավելին՝ այդ վտանգները կարող են նվազեցնել գործիքի օգտագործման արժեքը նաև այն պատճառով, որ հենց օգտագործողները (ենթադրաբար՝ մանկավարժները) ժամանակին զուրկ չեն եղել նշված թերություններից: Սա կարող է հանգեցնել ՔԿԱԳ-ի սիրողական օգտագործման և սպանել նպատակը: Քաղաքացիական կարողունակությունների արագ գործարկման համար մշակված Ստուգաթերթի պատշաճ կիրառումը ենթադրում է, որ անհրաժեշտ է կանխատեսել նման վտանգները:

7 Այդ բացը լրացնելուն կարող է օգնել «Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հոետորաբանական շեղող կիրառուկներ» գրքույկը, 2019 թ. <https://epfarmenia.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>

Գծապատկեր 2. Հակակոմպլեքսներստորության ծուղակ



Այս գծապատկերը ցույց է տալիս ՔԿԱԳ-ին նախորդող կարողունակությունների ձևավորման ընթացքում ստեղծված որոշ արժեքային բացերը և այն, թե ինչպես դրանք կարող են ազդել սովորողի հետագա վարքագծի վրա: Պատկերացրեք մի աշակերտի, որը չի տարբերում լավ տրամաբանությունը վատից և սովորաբար կտրում և տեղադրում է իր տեքստերում այլ տեքստերից վերցված հատվածներ (գրագողություն), ինչի արդյունքում ընդհատվում են չորս հիմնական կարողունակությունների միջև եղած կապերը: Անգամ եթե նման աշակերտը համակարգելու և ստեղծագործելու կարողություն ունենա, նրա՝ հասկանալու, ըմբռնելու հետ կապված բացերը կազդեն ՔԿԱԳ բոլոր կարողունակությունների վրա, քանի որ «կտրելու» և «տեղադրելու» արատավոր սովորությունը դարձնում է մարդուն պասիվ և չի նպաստում Սուրբեկտայնության ձևավորմանը, իսկ վատ տրամաբանությունը հանգեցնում է չհիմնավորված, ոչ իրատեսական նպատակներ հետապնդող նախագծերի մշակմանը: Նման դեպքերում աշակերտները, ջանալով համապատասխանեցնել վատ նախագծի արդյունքները անհասանելի նպատակին, պարզապես հորինում են կեղծ տվյալներ, որոնց հիման վրա կեղծ փաստարկներ են ներկայացնում: Այս ամենը կարող է պարարտ հող ստեղծել, որպեսզի նրանք դավադրության տեսության զոհ դառնան կամ, ինչն ավելի վատ է՝ սկսեն աշխատել «տրոլների գործարանում», որը սակավ աշխատատեղեր առաջարկող շուկայում ստանձնում է առավել ակտիվ հավաքագրողներից մեկի դերը, և հավաքագրվողների թվում առաջին հերթին հայտնվում են վերը նշված խմբերը, որոնց բարոյական (այսինքն՝ Սուրբեկտայնության զգալը, որ նրանք դրականորեն ազդում են հասարակության վրա) և ինստիտուցիոնալ պաշտպանվածությունը նվազում է, և նրանք հայտնվում են անիշխանավորված, անգոր, իրավագուրկ վիճակում:

ԼՈՒՍԱՎՈՐ ԿՈՂՄԸ

Որդեգրելով այս մոտեցումը՝ օգտատերերը հնարավորություն կստանան հեշտությամբ «որսալ» անհատների կարողունակությունների բացերը, օրինակ՝ գրանցել, որ նրանք չեն տարբերակում գիտականն ու ոչ գիտականը, գրագողությունն ու մեջբերումը և սեփական գաղափարները և կամ չեն գիտակցում, թե ինչով է տարբերվում սեփական ընտանիքի ու հարազատների մասին հոգալը այդ շրջանակից դուրս՝ համայնքին կամ հասարակությանը օգուտ բերելուց:

ՄԱՍ II.

ԱԿԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔ. ՔԿԱԳ ՀԻՄՆԱԿԱՆ «ՀԱՍՏ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ»

ՔԿԱԳ կարողունակությունների յուրաքանչյուր բարդ տիրույթն ընդգրկում է մեկ հիմնական «հաստ փոփոխական», ինչը օգնում է ծրագրողին/կրթողին/գնահատողին համեմատաբար հեշտ մոտեցում դրսևորել գործունեության ծրագրման/ իրականացման/ գնահատման խնդիրը լուծելիս:

*«Մտքյեկրայնության» կրողը կամ «Ռազմավարական Ուլ-ը» լինելու կարողունակության կարևորագույն հատկանիշը որոշումների կայացման և իրականացման միջև եղած բացը լրացնելու կարողությունն է: **Որոշումների կայացումը** (դրանց ձևակերպումը) պահանջում է բազմաթիվ հմտություններ, որոնցից են՝ թիմի հետ աշխատելու և նպատակակետի վրա կենտրոնանալու հմտությունը, ծրագրելու և ռեսուրսները ճիշտ գնահատելու կարողությունը (տե՛ս «Նախագծային հարացույց» բաժնի կարողունակությունները), համոզիչ լինելու, փաստարկներ բերելու, բանակցելու, համոզելու, փոխզիջումների գնալու, կիսվելու ունակությունը և այլն: Սակայն այդ կարողունակությունը ամբողջական է դառնում միայն կարևորագույն՝ **որոշումները իրագործելու** կարողության առկայության պարագայում: Սա պահանջում է լրացուցիչ հմտություններ, այն է՝ աշխատել՝ չխախտելով նշված ժամկետները, պատրաստ լինել դիմակայելու չնախատեսվածին, անձանոթին և անսպասելիին, ճկուն ձևով փոխվել, երբ փոխվում են հանգամանքները՝ միևնույն ժամանակ ուշադրությունը չշեղելով դրված նպատակից, և այլն: Որքան ավելի կանխատեսելի է որոշման իրականացման հնարավորությունը և որքան ավելի հաշվարկելի է ակնկալվող հաջողությունը, այնքան ավելի մեծ է այդ որոշման արժեքը:*

Քննադատական մտածողությունը, ինչպես արդեն նշվել է,

այլ հնտությունների հետ մեկտեղ ու, թերևս, առաջին հերթին *պահանջում է փարբերել այս կամ այն իրավիճակում կամ փերստում փեղ գրած ազնվությունն անազնվությունից, արդարությունն անարդարությունից*: Այն պահանջում է նաև վիճելու, փաստարկելու, ապացուցելու ունակություն, օրինակ, հետևյալ իրավիճակում. արդյո՞ք, Ռազմավարական Ով-ի կարծիքով, ընթացիկ հաղորդակցությունը ունի մանիպուլատիվ կամ սադրիչ բնույթ, թե՞ այն ընթանում է համաձայն հաղորդակցության կառուցողական, մասնակցային օրենքների:

Նախագծային հարացույց. այս կարողունակության տիրույթում պարզվում է, հասկանալի է արդյո՞ք Ռազմավարական Ով-ը, թե ինչ է նախագծային հարացույցը և օգտագործում է արդյո՞ք այն իր գործունեության ընթացքում, ստուգվում է արդյո՞ք, թե որքանով են համապատասխանում կամ որքանով կարող են համապատասխանել նրա ընթացիկ կամ ծրագրվող նախաձեռնությունները *նախագծային «քերականությանը»՝ նպատակներին, խնդիրներին, արդյունքներին, գործողություններին (և որպես հաջորդ սյունյակ՝ ռիսկերին, աշխատանքի բաժանմանը, ռեսուրսներին ևն)*:

Նշված ձևով չնշակված կամ նշված պլանավորումն անտեսած նախաձեռնությունը չի կարող դիտարկվել որպես իրատեսական, ուստի քաղաքացիական կարողունակությունների ձևավորման առումով այդ նախաձեռնության շրջանակներում կատարվող կամ կատարվելիք գործունեությունը կգնահատվի որպես անբավարար: Մինևույն ժամանակ «ամեն ինչ նախագիծ է» գաղափարը թույլ է տալիս կրթողներին անգամ մեկ՝ 45 րոպեանոց դասի սահմաններում նախագծահեն կրթություն ապահովել: Թեև սա աշակերտներին նախագծի վերաբերյալ բացատրություններ տալու լավագույն ձևը չէ և չպիտի դառնա հիմնականը (ժամանակի սղության պատճառով. պետք է շատ ավելի խոշոր ժամանակահատվածներ հատկացնել նախագծային ուսուցման համար), «ամեն ինչ նախագիծ է» գաղափարի գիտակցումը կօգնի նրանց այդ դիտանկյունից նայել ուսումնական գործընթացին և զարգացնել այդ կարողունակությունը: Այն ձեռք է բերվում վերհանում/ռեֆլեքսիա կոչվող արժեքի շնորհիվ (տես ստորև). «Այժմ՝ այստեղ և այս պահին մենք գտնվում ենք նախագծի շրջանակներում, - ասում է ուսուցիչը: - Որո՞նք են նախագծի նպատակները: Ի՞նչ արդյունքներ եք ակնկալում: Ի՞նչ ենք արդեն արել և ի՞նչ դեռ պիտի անենք՝ այդ նպատակներին հասնելու համար»:

Ինչ է բուն քաղաքացիականությունը/քաղաքացիականության առանցքը. այն, թե որքանով է նպաստում րվյալ գործունեությունը հանրային բարիք սրելով: Այլ կերպ ասած, դա այն գործունեությունն է, որի նպատակը մերթիմներին օգուտ տալը, շահույթ սրանալը կամ քաղաքական կարիերա ապահովելը չէ: Քաղաքացիականության այս ընկալումն ու իմաստավորումը բխում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի՝ քաղաքացիական հասարակությանը տրվող սահմանումից, համաձայն որի քաղաքացիական հասարակությունն ընդգրկում է այն դերակատարներին, որոնց գործունեությունը րվյալ պահին հանրային բարիք է սրելով ոչ թե շահույթ սրանալու, իրենց հարազատներին օգնելու, քաղաքական կամ պետական համակարգերում կարիերային աճը ապահովելու նկատառումներից ելնելով, այլ հանուն համայնքի և հասարակության: Պարզ է, որ գործունեությունը կարող է հանգեցնել նաև վերը նշված արդյունքների, որոնք արգելված չեն, և Ռազմավարական Ով-ը պետք է հաշվի առնի դա: Այսպես, օրինակ, հնարավոր է, որ ՏԻՄ-ը, վերանորոգելով ճանապարհը, օգուտ է բերում նաև որևիցե մեկի հարազատին, կամ մի քանի հաջողված հանրային նախագծեր իրականացրած անձին առաջարկվում է միանալ քաղաքական թիմին և այլն: Սակայն գործունեությունը չպիտի հետապնդի նման նպատակները որպես առաջնային և պիտի գլխավորապես կենտրոնացած լինի հանրային բարիք ստեղծելու վրա: Հանուն կարճաժամկետ շահի ընտրությունների ժամանակ կաշառք վերցնողներին չի մտառում, թե ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում ինչ հետևանքներ կունենա այդ քայլը: Սակայն իրական քաղաքացիականությունը պահանջում է զոհաբերել կարճաժամկետ շահը, նաև քանի որ նման վարքագիծը կարող է կործանարար ազդեցություն ունենալ հասարակության բարոյական արժեքների վրա: Սա այն դեպքն է, երբ հետևանքները այլասերում են ոչ թե առանձին անձանց, այլ ամբողջ հասարակությունը և կառավարման համակարգը: Այս իրավիճակում օգնության է գալիս մեկ այլ կարողունակություն՝ քննադատական մտածողությունը՝ թույլ տալով գիտակցել, որ նման գործարքը արդարացված չէ, որ նման գործարքի մասնակիցների օգուտներն անհամեմատելի են. մի կողմինը հսկայական է, մյուսինը՝ չնչին, քանի որ մի կողմը ստանում է երկար ժամանակով անարդար ձևով իշխելու հնարավորություն, մյուսը՝ միանվագ կաշառք: Հարյուր և անգամ հինգ հարյուր դոլարը և հինգ տարի խորհրդարանում նստելը համարժեք մեծություններ չեն:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔ ԵՎ «ՑԱՆԿԱՑԱԾ ԱՅԼԸ». ԳԻՏԵԼԻՔ, ՀՄՏՏՈՒԹՅՈՒՆ, ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄ ԵՎ ԱՐԺԵՔ

ՀՀ հանրակրթական համակարգի բարեփոխումների համատեքստում սահմանված կարողունակությունները բովանդակում են չորս «հաստ փոփոխականներ»⁸՝ գիտելիք, հմտություն, դիրքորոշում և արժեք: Ողջունելի է, որ սահմանումը սկսվում է ոչ թե արժեքներից, այլ գիտելիքից, քանի որ հասկանալու համար, թե ինչ է գիտելիքը, անհրաժեշտ է հասկանալ և ընդունել, որ գոյություն ունի օբյեկտիվ իրականություն, որն այնուհետև ազդում է անհատի արժեքային համակարգի վրա: Միևնույն ժամանակ պարզ չէ, թե ինչպես են հարաբերակցվում այդ «հաստ փոփոխականները» և արդյոք տարբեր նպատակներ հետապնդելու պարագայում (օրինակ, դասընթացները կառուցված են այնպես, որ դրանցից մի մասի նպատակը գիտելիք տալն է, մյուսինը՝ հմտություններ, և այլն) դրանց հանրագումարը կապահովի աշակերտին պահանջվող կարողունակություններով: Սովորաբար կարողունակությունները յուրացնել օգնելիս վերը նշված չորս «հաստ փոփոխականներից» բացի պիտի հաշվի առնվեն նաև այլ «հաստ փոփոխականներ», ասենք՝ ունակությունները: Միևնույն ժամանակ կարողունակությունները խմբավորելու տարբեր եղանակներ կան: Մեկ այլ փաստաթղթում նշվում են գիտելիքը, հասկանալու/ըմբռնելու ունակությունը, դատողությունն ու հմտությունը: Կրթության ոլորտի մասնագետներն ու հետազոտողները չեն եկել համաձայնության, թե ինչ սկզբունքներով պիտի հարաբերվեն այդ միավորները: Համենայն դեպս, առայժմ որևէ համոզիչ մոտեցում չի ներկայացվել: Սա կարող է դառնալ քննարկվող խնդիրներից մեկը: Այնուհանդերձ եկեք տեսնենք, թե ինչպես են Հայաստանի համար մշակված չափորոշիչները հարաբերվում ՔԿԱԳ փոփոխականների հետ:

ՔԿԱԳ կարողունակությունների ոլորտները և այդ ոլորտների «հաստ փոփոխականները» հիմնվում են տեղեկատվական տիպի՝ արդեն առկա գիտելիքի վրա: Այլ կերպ ասած, ըստ ՔԿԱԳ մոտեցման՝ կրթելը չի նշանակում սովորողին տեղեկատվություն տրամադրել: Կրթել նշանակում է վերհանել, ակտիվացնել այն, ինչը նրանք արդեն գիտեն: Եթե գիտելիքի (այսինքն՝ տեղեկատվությանը

8 «Հաստ փոփոխական» է անվանվում այն փոփոխականը, որի սահմանները, հստակ պատճառա-հետևանքային կամ այլ օրինաչափական հարաբերությունն այլ փոփոխականների հետ և ներքին բովանդակային հստակեցումը վերջնական չեն:

տիրապետելու) ոլորտը լրացվելու, հարստացվելու կարիք ունի, օգնության է գալիս համացանցը կամ ուսուցչի խորհուրդը, թե որտեղ գտնել համապատասխան նյութը: Տեղեկատվական տիպի գիտելիքը նաև արագացված ձևով լրացվում է նախագծերի իրականացման միջոցով, և այդ գործընթացը օգնում է Ռազմավարական Ով-ին հասկանալ տեղեկատվության ձեռքբերման գործառական (ֆունկցիոնալ) և կառուցվածքային տեսակների միջև եղած տարբերությունը: Նախագիծ իրագործելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ցանկացած գիտելիք, որը կօգնի այն իրագործելուն, և ո՛չ թե, ո՛չ միայն կառուցվածքորեն նախապես դպրոցի և ուսուցիչների կողմից «վերևից» իջեցված, կառուցվածքային մոտեցման վրա հիմնված գիտելիքը: Նախագծային իրադրությունը Ռազմավարական Ով-ին անմիջապես ցույց կտա կառուցվածքային համակարգման սահմանափակումներն ու թերությունները: Օրինակ, կարող է լրացուցիչ փաստարկ պահանջվել քաջալերելու համար, որպեսզի տեղական ինքնակառավարման մարմինը և Ռազմավարական Ով-ի թիմակիցները ստանձնեն փողոցը կանաչապատելու գործը: Այդպիսի փաստարկ կարող է դառնալ այն փաստը, որ փողոցը կրում է շրջակա միջավայրին նվիրված բանաստեղծության հեղինակի անունը: Սակայն աշակերտները կարող են չհամանալ այդ մասին, քանի որ տվյալ բանաստեղծը չի ընդգրկվել գրականության ուսումնական ծրագրում: Մինևույն ժամանակ, եթե կառուցվածքային մոտեցումը հաջողությամբ է պսակվում, Ռազմավարական Ով-ը ձեռք է բերում համակարգային մտածողության, ցանկացած նոր՝ ֆունկցիոնալ առումով օգտակար տեղեկատվությունը յուրացնելու, արդեն եղած գիտելիքի հետ կապերի՝ համակարգի մեջ այն տեղավորելու, զարգացնելու, վերափոխելու և հետագայում նույնպես այն օգտագործելու կարողություն: Գիտական աշխարհայացքը ձևավորելու համար անհրաժեշտ է խթանել և զարգացնել համակարգային մտածողության կարողությունը՝ մինևույն ժամանակ հետևելով, որ այն չկորցնի իր իմաստավորվածությունը, մնալով ճկուն, որպեսզի վերանայի ինքն իրեն, երբ անհրաժեշտ է: Այստեղ է, որ ֆորմալ և ոչ ֆորմալ, ավանդական և կարողունակությունների վրա հիմնված կրթական համակարգերի «համագործակցությունը» կարող է ձեռք բերել կառուցողական բնույթ. մեկը մատարակարում է անընդհատ կառուցվածքային գիտելիք՝ համակարգեր, մյուսը կյանքին քննադատորեն համադրելով այն և ֆունկցիոնալության կարիքից ելնելով՝ վերափոխում է, մի կողմից՝ սովորելով, թե որքան կարևոր է

կառուցվածքն ու համակարգվածությունը, մյուս կողմից՝ չդարձնելով դրանք կարծր և ոչ ֆունկցիոնալ:

Ինչպես քննադատական մտածողությունը, որը սկսվում է անարդարությունը զգալուց, այնպես էլ քաղաքացիական կարողունակությունները պահանջում են մարդու իրավունքներին, հանրային հաղորդակցության դերին, քաղաքացիությանն ու կառավարության իրավունքներին ու պարտավորություններին վերաբերող նախնական գիտելիք: Որոշում կայացնելու և իրագործելու համար անհրաժեշտ են սոցիալական և հաղորդակցման կարողունակություններ: Նախագծային հարացույցը պահանջում է տիրապետել ռացիոնալ մտածողության հիմունքներին: Հետազոտական նախագծի քննարկման փուլը ենթադրում է Սուբյեկտայնության, Քննադատական մտածողության և Նախագծային հարացույցի համադրում, ինչը հնարավորություն է տալիս հետազոտությունը ծրագրողին և իրագործողին դիտարկել, թե որքանով է այն հիմնավորված և իրատեսական, և արդյոք իր արդյունքը կլինի հարցական որոշակի առումով կայուն: Առողջ թերահավատությունը ողջունելի է, երբ կա հիմք ենթադրելու, որ մուտքագրվող տվյալները կարող են լինել սխալ, մանիպուլյատիվ կամ անարդար՝ հատկապես, եթե դրանց աղբյուրը որևէ հզոր սուբյեկտ/դերակատար է, քանի որ նման մոտեցումն օգնում է զարգացնել ինչպես հարցեր տալու կարևորագույն ունակությունը (կամ առնվազն չկորցնել այն մանկությունից հետո), այնպես էլ՝ էթիկայի կանոնները չխախտող դատողություններ անելու նույնքան կարևոր կարողությունը:

Միննույն ժամանակ ՔԿԱԳ կարողունակությունների՝ գործունեական ուղղվածություն ունեցող ոլորտները ցանկացած պատիվ գիտելիքը վերածում են փորձի, քանի որ պահանջում են, որ այն օգտագործվի, և ճիշտ կիրառման պարագայում դառնում են հմտություններ: Մինչ այդ եղած լինելով այդ ոլորտների *ներսում* (գնահատման սուբյեկտ – թե որքանով են իր գործողությունները դրանց համապատասխանում), դրանց գիտակից գործածման շնորհիվ օգտատերը դառնում է դրանք սկզբում գիտակցաբար, հետո՝ հմտորեն *կիրառող*, ինչպես իր գործողություններն իրականացնելիս, այնպես էլ՝ ուրիշների գործողությունները գնահատելիս: Սուբյեկտայնության կարողունակության մեկ այլ բաղադրիչը Ռազմավարական Ով-ի թիմայնացումն է (անհատից թիմին հասնելը): Այդ նպատակին

հասնելու համար անհրաժեշտ է գործի դնել մի քանի սոցիալական հմտություններ, աշխատել ներթիմային համաձայնությունը, աշխատանքի ճիշտ բաժանումը, փոխօգնությունը, ապրումակցումն ապահովելու ուղղությամբ, ինչպես նաև իրականացնել մի շարք գործողություններ, որոնք, բխելով տարիներ առաջ որպես «սահող գններալների սկզբունք»⁹ ձևակերպված մոտեցումից, նպաստում են թիմային առաջնորդության հմտությունների ձևավորմանն ու կատարելագործմանը: Վերը բերված օրինակում կառուցվածքային և ֆունկցիոնալ գիտելիքների համադրման խնդիրն էր քննարկվում: Իսկ կարողունակությունը պահանջում է այլ համադրում. աշխատանքի բաժանման և մասնագիտացման սկզբունքը պահպանել՝ միաժամանակ խուսափելով գործունեությունների՝ միմյանցից պատասխանատվության և տեղեկացվածության առումով անջատումից («կուպեավորումից»): Այս համադրման արդյունքում թիմի յուրաքանչյուր անդամ հնարավորություն կստանա ձեռք բերել տարբեր հմտություններ, բացի իր նեղ «մասնագիտացումից», և, անհրաժեշտության դեպքում, թիմի այլ անդամներին փոխարինելու կարողություն:

Ինչ վերաբերում է *դիրքորոշմանն* ու *արժեքին*. նախագծային հարացույցը պահանջում է *դրական դիրքավորում*: Այլ կերպ ասած, անհրաժեշտ է, որպեսզի նախագիծը ծրագրողները կամ իրականացնողները հավատան, որ այն իրագործելի է և որ լայն համատեքստը, այսինքն՝ մեզ շրջապատող աշխարհը, նախապես տրամադրված կլինի, որ նախագծի իրագործումը պսակվի հաջողությամբ: Սակայն դա ամենևին չպիտի խանգարի Ռազմավարական Ով-ին՝ քննադատաբար վերաբերվել նախաձեռնությանը, վերլուծել այն թե՛ ամբողջությամբ, թե՛ մաս-մաս, մանավանդ ՔԿԱԳ կարողունակությունների տեսանկյունից: Ռազմավարական Ով-ը պիտի կարողանա տարբերակել անհատական և թիմային նախագծերը և հասկանալ, որ անգամ անհատական թվացող նախաձեռնությունները սոցիալական հմտությունների կարիք ունեն. տնային աշխատանքը պիտի հանձնարարվի և ստուգվի, աշակերտի գրած բանաստեղծությունը պիտի ընթերցվի, ընկալվի, գնահատվի և քննադատվի ուրիշների կողմից, որպեսզի դառնա բանաստեղծություն: Մարդու իրավունքներին, քաղաքացու և կառավարության իրավունքներին և պարտականություններին

9 Տե՛ս «Սահող գններալի սկզբունքը» «Համակարգված մտագործունեության մեթոդաբանություն եվ կրեատիվ խաղեր» (ՀՄԳՄ) ձեռնարկում, 2021, էջ 9

վերաբերող ընդհանուր և արատրակտ գիտելիքը պիտի համադրվի ՔԿԱԳ և այլ նման նախագծերի առաջադրած մոտեցումների կոնկրետությանը: Այս մոտեցման կիրառման դեպքում, երբ ընտանիքում կամ համայնքում մարդիկ առերեսվում են իրական խնդիրներին, օրինակ՝ գենդերի նկատմամբ ավանդական և ժամանակակից մոտեցումների միջև եղած հակասություններին, նրանց արժեքային համակարգը ձևավորվում և/կամ փոփոխության է ենթարկվում ո՛չ թե վերացական և անքննադատորեն ընկալված արժեքների, այլ ՔԿԱԳ-ի և մասնավորապես՝ Քննադատական մտածողության հիման վրա: Բուն քաղաքացիականությունը, համադրվելով մյուս երեք կարողունակությունների հետ, մոտեցնում է մեզ այն հարցին, թե ո՞ր արժեքներն է անհրաժեշտ առաջ քաշել/ հասցեագրել (ընդհանրապես և տվյալ իրադրության մեջ) և ինչպե՞ս է պետք անել դա: Եթե այլ կարողունակությունները, օրինակ՝ Սուրյեկտայնությունն ու Նախագծային հարացույցը, կարող են օգտագործվել հասարակության տեսանկյունից ինչպես դրական, այնպես էլ բացասական նպատակներով, ապա նրանց ներքին փոխկապակցվածությունը Քննադատական մտածողության և Բուն քաղաքացիականության հետ (որոնք համապատասխանաբար պահանջում են տարբերել արդարացին անարդարացիից և լինել կամավորական գործունեության, հետևաբար՝ անշահադետության՝ ավտրոիզմի գաղափարի կրողը) հնարավորություն է ստեղծում արժեքները քննարկել որպես կարողունակությունների բարդ համադրություններին առնչված:

ՄԵԾ ՊԱՏԿԵՐԻ, ԱՊԱԳԱՅԻ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ. ՔԿԱԳ «ՄԱԳՆԻՍԸ»

Չափազանց կարևոր կարողունակություն է՝ ինչպե՞ս չկորչել տեղեկատվության անծայրածիր ծովում: Քաղաքացիական կրթության ասպարեզը շատ ընդարձակ է, և մարդիկ հաճախ չեն կողմնորոշվում, թե ո՞ր կարողունակությունն է առաջնահերթ տվյալ պարագայում: ՔԿԱԳ-ը կարող է օգտակար լինել նաև խորագրերի այդ օվկիանոսում կողմնորոշվելու համար, քանի որ, դիտարկելով որոշ կարողունակությունները որպես առաջնային, չի արժեզրկում մյուսները: Կիրառելի ՔԿԱԳ-ը ցանկացած իրավիճակում, և կտեսնեք, որ այն համակարգված տեսք կստանա՝ կազմակերպվելով չորս կարողունակությունների ասես «մագնիսական դաշտերի» շուրջ:

Ապագայի մասին

Ինչպես ՔԿԱԳ, այնպես էլ այլ կարողունակությունները զարգացնելու արդյունավետ ձևերից մեկը *մեծ պատկերը* ներկայացնելն է, օրինակ, երբ կրթություն կոչվող ճանապարհորդության սկզբում ցույց է տրվում, թե ո՛ր են հասնելու աշակերտները, երբ այդ ճանապարհորդությունն ավարտվի, և հետագայում, մի քանի անգամ վերադառնալով անցած ճանապարհին, ներկայացվում է, թե ո՛ր հանգրվանին են նրանք հասել տվյալ փուլում: Սա նույն խորհուրդն է, ինչ տրվում է աշակերտին հարցախույզ լրացնելու վերաբերյալ. նախ սկզբից մինչև վերջ ծանոթացիր հարցերին, հետո նոր սկսիր դրանց պատասխանել: Սա օգնում է, որպեսզի աշակերտը տեսնի ողջ ճամփորդությունը, որ պիտի անցնի, և ձեռք բերի նախնական համակարգային պատկեր առաջադրանքի մանրամասների վերաբերյալ:

Ապագան իմանալն ուժ է, ամենակարևոր ուժերից մեկը, մինչդեռ կրթական իրավիճակներում հայաստանցի աշակերտները, և հատկապես երեխաները, հաճախ չեն գինվում այդ գիտելիքով: 14 տարեկանում նրանք սովորում են, թե ինչ բան է տնտեսությունը, սակայն սովորաբար նրանց չի ասվում, որ դրանից երկու տարի անց նրանք պիտի սովորեն կողմնորոշվել կապիտալիզմի և սոցիալիզմի քաղաքատնտեսական համակարգերում և հասկանալ դրանց տարբերությունները: Կամ՝ աշակերտներին բացատրվում է, որ պարտքի մարումը կարևորագույն բարոյական արժեքներից է, սակայն չի ասվում, որ ընդամենը մեկ տարի անց նրանք ուսումնասիրելու են վարկային համակարգերը և անգամ սովորելու են բանկային հաշիվ բացել և առցանց բանկային գործարքներ կատարել: Բերված օրինակների նպատակն էր ցույց տալ, որ, իմանալով, թե ի՞նչ հեռանկար, ի՞նչ գործնական կիրառում կարող է ունենալ տվյալ ժամանակահատվածում մատուցվող նյութը, աշակերտներն ավելի լավ են յուրացնում այն, քանի որ այդ նյութը գտնում է իր տեղը նրանց գիտակցության մեջ աստիճանաբար ձևավորվող համակարգում:

Սա կապված է նաև «Ֆրակտալ» մոտեցման հետ: Եթե դուք քարոզում եք *թափանցիկությունը* որպես հիմնական արժեք, ինքներդ թափանցիկ եղեք. ցույց տվեք աշակերտներին սպասող ուսուցման ճանապարհը: Թևաթափ մի՛ արեք աշակերտներին՝ ասելով, որ անիմաստ է տեղեկացնել նրանց, թե ի՞նչ են սովորելու երեք տարի անց, քանի որ նրանք, միևնույն է, չեն հասկանա: Այս

հարցում օգնության է գալիս Նախագծային հարացույցը, որը հենց ապագան պատկերացնելու մասին է: Երևակայության մկաններին ուժ է տալիս նաև Քննադատական մտածողությունը, ստիպելով աշակերտներին մտածել, թե ո՞վ և ի՞նչ նպատակով կարող է ցանկանալ շահարկել իրենց՝ ներգրավելով անարդար գործի մեջ կամ ապատեղեկատվություն տրամադրելով: Սա նպաստում է նաև ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Իշխանության մասին

Մարդիկ «խեղդվում» են տեղեկատվության ծովում, որովհետև, ձեռք բերելով բազմապիսի կարողունակություններ, չեն յուրացնում դրանց առաջնահերթությունները որոշելու սկզբունքը: Օրինակ՝ ուսումնասիրում են բանավեճ վարելու հմտությունները, չունենալով լուրջ և հիմնավորված դիրքորոշում բանավեճի թեմայի վերաբերյալ, ուստի, ենթադրելով, որ յուրացնում են հոետորական և համոզելու հմտությունները, իրականում զբաղվում են սովետատությամբ: Արդյունավետ բանավեճի առարկա կարող են դառնալ միայն այն հարցերը, որոնց վերաբերյալ տվյալ անձն ունի անձնական դրույք, և դրանց քննարկումն իր համար կենսական կարևորություն է ներկայացնում: ՔԿԱԳ-ն օգնում է խուսափել դատարկ վերացականությունից: «Նիհար արստրակցիաների»¹⁰ վտանգով է, մասնավորապես, պայմանավորված այն հանգամանքը, որ դպրոցում տեսականորեն ուսումնասիրվող արժեքները հետագայում չեն դրսևորվում լայն հասարակության վարքագծում, քանի որ այն միջավայրը, որում հայտնվում են երեկվա աշակերտները, դուրս է մղում վերացական մակարդակում մատուցված արժեքներով առաջնորդվող վարքագիծը: Կարելի է ասել, որ ՔԿԱԳ մոտեցումն օգնում է ֆունկցիոնալ դարձնել կառուցվածքային եղանակով յուրացված ցանկացած արժեք: **«Նիհար արստրակցիաները» կարող են հաղթահարվել միայն գործողությամբ: Միայն գործողությունն է ստեղծում այն իրավիճակը, որում «դատարկ» վերացականությունը չի խճճում, չի խեղաթյուրում մեծ պատկերը: Քաղաքացիական կրթությունը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, եթե աշակերտները սովորեն կիրառել իրենց կարողունակությունները հասանելի, իրական խնդիրներ լուծելու**

¹⁰ «Նիհար արստրակցիա» են անվանվում այստեղ այն գիտելիքները կամ արժեքները, որոնք կան յուրացված են անքննադատորեն, և ուրեմն չեն դիմանա կյանքի փորձությանը, կան սովորողը չի պատկերացնում դրանց իմաստին համապատասխանող կոնկրետ դեպքերը կյանքում, կան՝ երկումն էլ:

համար, և դա այն փորձն է, որը թույլ կտա նրանց հետագայում անցնել ավելի մեծ ու հեռավոր խնդիրների լուծմանը: Ինչ վերաբերում է Սուրբեկտայնությանը, ապա հզորացնել սուրբեկտին և վերածել նրան Ռազմավարական Ով-ի նշանակում է տալ նրան տեղական մակարդակում գործելու և միևնույն ժամանակ մեծ պատկերը մտքում պահելու կարողունակություն:¹¹ **Անիմաստ է ժամանակ կորցնել, օրինակ՝ մեծ քաղաքականության վերաբերյալ վերացական կարծիք ձևավորելու վրա, եթե անգամ փոքր համայնքում կոնկրետ խնդիր լուծելու հնարավորություն և կարողություն չկա:** Դա պարզապես հիասթափեցնում և կամազրկում է մարդկանց: ՔԿԱԳ-ը օգտակար գործիք է նաև այդ խնդիրը առաջ քաշելու և լուծելու հարցում:

Դպրոցական առարկաները դասավանդելու մեթոդը քննարկելիս հնարավոր չէ շրջանցել այնպիսի լրջագույն խնդիր, ինչպիսին իշխելու հարցն է: Բոլորին հայտնի է, որ ուսուցիչները իշխող դիրք են գրավում աշակերտների հանդեպ: Սա պիտի բերվի հավասարակշռության, մի կողմից, ընդլայնելով աշակերտների իրավունքներն ու հնարավորությունները, մյուս կողմից՝ դրդելով ուսուցիչներին վերանայել իրենց իշխանության իմաստը: Այդ հավասարակշռությունը պիտի ձեռք բերվի ոչ միայն աշակերտներին ավելի շատ ներգրավելով դպրոցի կառավարման գործընթացում (դպրոցական խորհուրդներ), այլև հրաժարվելով տեղեկատվությունը «վերնից ներքև» իջեցնելու եղանակից: Այդ մեթոդը հաճախ կիրառվում է այնպիսի խստությամբ, որ աշակերտները չեն հանդգնում արտահայտել իրենց (թեկուզ և սխալ) կարծիքը, առավել ևս՝ անհամաձայնությունը: Այս առումով հատկանշական է, որ որոշ գովաբանվող էլեկտրոնային օժանդակ միջոցներ կարող են ոչ թե դրական՝ հարստացնող, այլ բացասական՝ աղքատացնող ազդեցություն ունենալ: Վերցնենք, օրինակ, Power Point ձևաչափով ներկայացվող նյութը, որը պատկերվում է էկրանի վրա, որը չի կարող ենթարկվել փոփոխության և որին աշակերտները նայում են ներքևից վերև: Իրականում նյութը մատուցելու այս ձևը ավելի շատ թուլացնում, հոգնեցնում է, քան ակտիվացնում է աշակերտին, քանի որ նախորդ երեկոյան ուսուցչի կողմից մի կերպ մշակած պատկերների շարքը ներկայացվում է որպես կայացած փաստ, որպես ուսուցման անփոփոխ միավոր, որպես անհերքելի և անխուսափելի անհրաժեշտություն: Կա դրա

¹¹ Այս մոտեցումը ընկած է Տեղական ժողովրդավարության դպրոցի (ՏԺԴ) հիմքում. <https://epfarmeria.am/hy/component-CELoG/SLD>

այլընտրանքային տարբերակը՝ սպիտակ գրատախտակը, որը շատ ավելի լայն հնարավորություններ է տալիս սովորողին. նա կարող է մոտենալ գրատախտակին և տեղում փոփոխել ներկայացված նյութը՝ ինչ-որ բան ավելացնելով կամ պակասեցնելով: Խրախուսելի են նաև բանավեճերը, քննարկումները, դերային և այլ կարգի խաղերը, անգամ սադրանքներն ու ինտելեկտուալ սկանդալները, որոնք ավելի շատ գիտելիք են տալիս մասնակիցներին, քան իշխող ուսուցչի կամոք «իջեցվող» անփոփոխ, քարացած և անհերքելի տեղեկատվությունը: Նյութը քննարկելու նշված եղանակներն օգնում են քանդել կարծրատիպերը, գնահատել բազմակարծությունը, ավելի ճկուն դարձնել ուսուցման գործընթացը, աշակերտներին զինում են հետագայում նոր պայմաններին ավելի արագ հարմարվելու, նյութն ավելի արագ յուրացնելու, սովորել սովորելու ունակությամբ:

Մեծ Պատկերի մասին

ԲԿԱԳ հիմքում դրվել են կրթության ոլորտին վերաբերող վերջին հետազոտությունների արդյունքները (Brown և այլք, 2014), իսկ առաջարկվող մոտեցման շրջանակներում օգտագործվել են կրթական իրավիճակներ և միջավայր ստեղծելուն ուղղված լավագույն և նորագույն գիտական խորհուրդները: Տասնամյակներ շարունակ մասնագետները պնդում են, որ կրթելու լավագույն միջոցը սովորողներին գործնական միջավայրում ընդգրկելն է: Ինչո՞ւ են նրանք եկել այդ եզրակացության: Որովհետև տեսական ուսուցման ընթացքում համատեքստի շատ տարրեր հաշվի չեն առնվում: Առերեսվելով գործնականին՝ աշակերտը դժվարանում է կիրառել ստացած գիտելիքը, եթե հայտնվում է հավելյալ, ոչ միանշանակ իրադրություններով լի իրավիճակում: Մինչդեռ կրթության ընթացքում հայտնվելով գործնական միջավայրում՝ սովորողը զարգացնում է տեղեկատվական խառնաշփոթում կողմնորոշվելու և առաջնահերթությունները գիտակցելու ունակությունը: Գործնական ուսուցումն ունի նաև լրացուցիչ առավելություն՝ այն սովորեցնում է սովորողին տեսնել իրավիճակի Մեծ Պատկերը: Տեսական, վերացական կրթությունը ոչ միայն զրկում է սովորողներին լայն համատեքստից¹², այլև սահմանափակում է գործնականում ավելի բազմազան մոտեցումներ դրսևորելու նրանց կարողությունը:

12 Երբեմն ասում են, որ լայն համատեքստը հենց տեսական ուսուցումն է տրամադրում: Սակայն իրականում լայն համատեքստը շրջակա աշխարհն է, որում «թաղվելով», աշակերտը «նիհար արստրակցիաների» փոխարեն հանդիպում է հսկայական քանակությամբ իրական ինֆորմացիայի, որի մեջ կողմնորոշվելն էլ հենց նշանակում է կարողանալ նավարկել լայն համատեքստերում: Ինչպես ասաց մի հայտնի իրավաբան՝ «իմ ողջ կրթությունը հօդս ցնդեց, երբ տեսա կյանքումս առաջին դիակը»:

Դա տեղի է ունենում, երբ նրանք անցնում են հաջորդ նյութին՝ չհասցնելով լիովին յուրացնել նախորդը և կապել այն հաջորդի հետ: Դա գալիս է նաև ապացուցելու, որ բազմազան, «փոխհաջորդող» թեմաների պրակտիկ ուսուցումն ավելի արդյունավետ է, քան «նեղ նպատակատրվածության» տարբեր ձևերը, ինչպիսիք են, օրինակ, նույնը սերտելը կամ անդադար, առանց հանգիստ առնելու նույն խնդրի լուծման վրա աշխատելը՝ օրինակ, երբ սովորողներին հանձնարարվում է սերտել վան Գոգի 50 աշխատանքները: Դրա հակառակը «համեմատական ուսուցումն» է, օրինակ՝ հերթագայել վան Գոգի և Պիկասոյի աշխատանքները: Այդ դեպքում երկու նկարիչների ստեղծագործություններն ավելի արդյունավետ ձևով են ընկալվում և գրանցվում են էքսպլիցիտ (ձևակերպված, հոդաբաշխ) հիշողության մեջ: Հնարավոր է դառնում անգամ տարբերակել Պիկասոյի՝ նախկինում աշակերտին անհայտ աշխատանքը վան Գոգի աշխատանքից: **Համեմատելու կարողությունը մարդու կարևորագույն մտավոր կարողություններից մեկն է**, որը թույլ է տալիս գրեթե առանց ջանք թափելու յուրացնել, հասկանալ, պահել հիշողության մեջ և կիրառել լրացուցիչ տեղեկատվությունը: Հայաստանի ֆորմալ կրթության համակարգն անտեսում է այս մոտեցումը: Օրինակ, հայոց պատմության դասավանդմանը վերաբերող քննարկումներում ընդհանրապես չի հնչում համեմատական մոտեցման անհրաժեշտությունը և կարևորությունը, այն է՝ պատմական նյութը մատուցելիս համեմատել այն հարևան ազգերի / երկրների պատմության հետ: Հայոց պատմության դասընթացներում (խոսքը ֆորմալ կրթության մասին է) հարևան ազգերը / երկրները հիմնականում ներկայացվում են որպես թշնամիներ, նախկին թշնամիներ կամ լավագույն դեպքում՝ որպես խոչընդոտներ: Մինչդեռ, ասենք, հայերի և վրացիների՝ մշակութային առաջընթացի ու ինքնության համար մղվող պայքարի համեմատական վերլուծությունը կօգներ լուծել ներկայումս չլուծված բազմաթիվ մեթոդաբանական խնդիրներ: Համեմատական մոտեցումն ընդհանուր պատկերն ավելի լավ է մոդելավորում, քան երկու առանձին՝ Հայաստանի պատմությունը և աշխարհի պատմությունը ներկայացնող առարկաները, որովհետև.

- այն մոդելավորում է Մեծ Պատկերը.
- որպես նախնական քայլ՝ ավելի հեշտ է ընկալել այս մոտեցումը, քան գտնել ընդհանուր պատմության և հայոց պատմության միջև եղած աղերսները.

- գործնական առումով այդ մոտեցումն ավելի մեծ արժեք և կարևորություն ունի.
- այն կամա թե ակամա պիտի ընդգրկի քաղաքացիական կրթության բաղադրիչները, քանի որ հարևան մշակույթն ուսումնասիրելը համագոր չէ միայն սեփական՝ «ընտանեկան» մշակույթն ուսումնասիրելուն, և ստիպում է խուսափել «եսակենտրոնությունից».
- այն մեթոդաբանական կամուրջ է, հայկական մշակույթի և համաշխարհային մշակույթի միջև բացակայող դիդակտիկ օղակ:

Ինչպես ապագան իմանալն է ընդլայնում սովորողների հնարավորությունների դաշտը, այնպես էլ իրական և գործունեական միջավայրը՝ իր ամբողջ համատեքստով հանդերձ, ներկայացնում է նրանց ընդհանուր, Մեծ Պատկերը, և դա թույլ է տալիս սովորողներին կառուցել և օգտագործել արդեն յուրացրաց և առայժմ չյուրացրած միավորների միջև եղած կապերը, որոնք հակառակ պարագայում այդպես էլ «քնած» կմնային:

Վերհանման¹³ (retrieval) և ռեֆլեքսիայի մասին

Վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տեղեկատվությունը հասկացությունների վերածելու և, դրանց վրա հիմնվելով, գիտելիքի բարդ ոլորտներում կարողունակություններ ձևավորելու լավագույն եղանակներից մեկն այսպես կոչված *վերհանումն* է (ի տարբերություն կրկնության)՝ մեթոդ, որն օգնում է սովորողներին գնահատել իրենց կարողունակությունների մակարդակը և բարձրացնել այն: Դա պիտի արվի մեղմ ձևով, օրինակ՝ *թվանշանների վրա չազդող թեստերի* կամ *վերհանման օրագրերի* միջոցով. ինչպես աշակերտները, այնպես էլ փորձաշրջան անցնող կամ սկսնակ (նաև փորձված) ուսուցիչները կարող են դրանք օգտագործել: *Ուսուցողական օրագրերը* ռեֆլեքսիայի և անցածը վերհանելու, վերհիշելու լավագույն միջոցներից են, և մենք առաջարկում ենք բոլոր շահագրգիռ կողմերին օգտագործել դրանք: Օրագրերը կարող են կապվել նաև ուսուցման թեմաների հետ (այդ մասին տես՝ Մաս երրորդ, օրինակ 9):

Իսնդիրն ավելի դյուրին դարձնելու նպատակով և ՔԿԱԳ սկզբունքից ելնելով՝ այստեղ առաջարկենք կիրառել «ռեֆլեքսիա» հասկացությունը: Ինչպես քննադատական

13 Խոսքը գիտելիքի՝ հիշողությունից վերհանելու մասին է:

մտածողությունն է առաջին հերթին վերաբերում իշխանության անհավասարակշռությանը, այնպես էլ ռեֆլեքսիան ունի իր «հաստ փոփոխականը», որն ամբողջությամբ չի ծածկում այդ բարդ հասկացությունն ու գործողությունը, սակայն օգնում է կիրառել այն՝ հետևելով համեմատաբար պարզ ցուցումների: Ահա այդ առանցքային «հաստ փոփոխականը». *ռեֆլեքսիան սկսելու համար որտեղ էլ գտնվեք, համեմատեք ձեր ներկայիս համարեքսպրը ձեր սովորած տեսական նյութի կամ նպատակաուղղված գործողության հետ, դիտարկեք ձեր համարեքսպրի և այդ գիտելիքի / գործողության միջև եղած (թելուզ պատահական թվացող) ընդհանրություններն ու տարբերությունները*: Սա կօգնի օրագրից օգտվողներին հստակեցնել, թե ինչի վրա է պետք կենտրոնանալ օրագիրը լրացնելիս և օրվա իրադարձություններն անսպասելի ձևով շարադրելու փոխարեն այդ վարժությունը իմաստավորել՝ ելնելով ՔԿԱԳ պահանջներից: Օրինակ՝ ենթադրենք, ձեր այսօրվա դասը թանգարանի այցելությունն էր: Ինչպես կարող եք համեմատել ձեր նոր փորձը՝ այն, ինչ սովորել եք, այն վայրի հետ, որտեղ գտնվում եք տվյալ պահին: Դա կարող է լինել, օրինակ, ձեր տունը: Կամ. այսօր ուսուցիչը խոսել է գենդերային անհավասարակշռության մասին: Նման է արդյոք գենդերային հարաբերություններին հատուկ անհավասարակշռությունը դասարանում տիրող՝ ուսուցիչ-աշակերտ հարաբերություններին, զգու՛մ են արդյոք աշակերտները ուսուցչի իշխանությունը, թե ոչ: Մեկ այլ օրինակ: Դուք կատու ունեք: Այսօր դասարանում ձեզ պատմել են թռչունների մասին: Կան արդյոք ընդհանրություններ կատուների և թռչունների մասին ձեր սովորածի միջև: Օրինակ, պետք է հիշել, որ ծտերի տեսակները շատ-շատ են, որ նրանք, կենսաբանորեն տարբերվելով միմյանցից, հաճախ նույն տեսքն ունեն: Իսկ ի՞նչ կասեք կատուների մասին: Եվ այլն, և այլն: Կապեք այն, ինչ սովորել եք, և այն, ինչ գտնվում է ձեր անմիջական միջավայրում, և դուք առաջընթաց կապրեք ռեֆլեքսիայի ճանապարհին: Սա ցույց կտա ձեզ, թե ինչ ուժ ունի համեմատելու կարողությունը և կապացուցի, որ երկարաժամկետ հիշողության մեջ գիտելիքը «պահեստավորելու» ամենալավ միջոցներից մեկը նոր տվյալներն արդեն իմացածի հետ կապելն է, և որ այդ մտավոր գործողությունը մեծ ջանք չի պահանջում: Այս մոտեցումը, իհարկե, համադարման չէ: Դուք միևնույն է կարող եք մոռանալ այն, ինչ սովորեցիք այս վարժության միջոցով, ինչպես նաև կարող եք դժվարանալ կապել, օրինակ, դիֆերենցիալ հավասարումն այն խոհանոցի հետ, որտեղ նստած լրացնում եք ձեր օրագիրը: Սակայն անգամ հաշվի առնելով նման հնարավորությունը՝ այս վարժությունն

արժի կատարել: Հավասարման լուծումը կարող է գրանցվել կամ չգրանցվել ձեր հիշողության մեջ, սակայն այդ գործողության մասին հիշողությունը կկապվի այն վայրի հետ, որտեղ տեղի է ունեցել ռեֆլեքսիան, տվյալ դեպքում՝ խոհանոցի հետ, և դա կօգնի ձեզ հասկանալ, թե որտեղ է կարող թարմանալ խնդրի լուծմանը վերաբերող հիշողությունը: Այս մոտեցումն ինչ-որ չափով նման է տատիկի խորհրդին՝ հանգուցել թաշկինակը, երբ բնակարանում որևէ կորած իր էք փնտրում, օրինակ՝ բանալին կամ անձնագիրը: Միևնույն ժամանակ, դուք կարող էք գրանցել օրագրում, թե ինչպես է լուծվում դիֆերենցիալ հավասարումը, բայց դա չի նշանակում, որ կհիշեք, թե ինչպես է այն լուծվում: Մի կողմից, դուք կիմանաք, որ լուծման եղանակը գրառել էք օրագրում, սակայն մյուս կողմից որևէ գիտական ապացույց չկա, որ դա կօգնի ձեզ ավելի լավ հիշել հենց այն, թե ինչպես է լուծվում տվյալ հավասարումը:

Թեև ռեֆլեքսիայի օրագիրն արդյունավետ կրթական գործիք է, այստեղ մենք խորհուրդ ենք տալիս կիրառել այն առաջին հերթին քաղաքացիական կրթության և մասնավորապես՝ ՔԿԱԳ համար: Քաղաքացիական կրթության պարագայում լավագույն կիրառումը կլինի, եթե դուք, յուրացնելով անցած նյութը և կապելով այն ձեր անմիջական միջավայրի հետ, գրանցեք նաև ձեր մտքերն այն մասին, թե ինչպես կարելի է համադրել այդ կապը վերը նշված կարողունակությունների՝ Սուբյեկտայնության, Քննադատական մտածողության, Բուն քաղաքացիականության և Նախագծային հարացույցի հետ: Սա, անշուշտ, ավելի բարդ վարժություն է, քան օրվա անցած նյութն անմիջական միջավայրի հետ կապելը, սակայն այն կարող է առաջարկվել կրթվողների առավել կարող խմբին, օրինակ՝ փորձաշրջան անցնող, սկսնակ և անգամ փորձառու ուսուցիչներին, համալսարանի ուսանողներին և դասախոսներին, դպրոցն ավարտած երիտասարդներին կամ ավագ դպրոցի աշակերտներին: Ինչպես արդեն նշվել է, «թռչնի բարձրությունից» հայացք գցելով ապագան պատկերացնելը և ռեֆլեքսիայի միջոցով համատեքստն ընդլայնելը մեծապես օգնում են սովորելուն: Ավելացրեք դրան այն փաստը, որ խնդիրները լուծելու կարողությունը գնահատելու լավագույն եղանակներից մեկն է խնդրել, որ սովորողները նկարագրեն, թե ինչպես են հանգել այս կամ այն լուծմանը: Վաղ բացատրելով սովորողներին ՔԿԱԳ մոտեցման սկզբունքը և առաջարկելով նրանց գիտակցաբար անդրադառնալ դրան՝ դուք կքաջալերեք նրանց ընդունել այն և, որպես արդյունք, ձեռք բերել քննադատական մտածողության հմտություններ, տեսնել իրավիճակը նախագծի

տեսանկյունից, հզորացնել իրենց սուբյեկտայնությունը և գիտակցել քաղաքացիական արարքների իմաստն ու կարևորությունը: Այստեղ հնարավոր է հետևյալ առարկությունը. ինչ օգուտ կարող են տալ աշակերտներին միայն մասամբ ընկալված բարդ հասկացությունները: Սակայն մեր փորձը ցույց է տալիս, որ կարող են և տալիս են, քանի որ ուշադրությունը կենտրոնացնում են գործընթացի կարևոր բաղադրիչների վրա: Ինչպես ուսուցիչները, այնպես էլ աշակերտները կարող են կիրառել ՔԿԱԳ «մագնիսը» թե՛ կրթական, թե՛ իրենց կյանքին վերաբերող այլ իրավիճակներում: Իրենց օրագրերը լրացնելիս աշակերտները կարող են հատուկ ուշադրություն դարձնել ՔԿԱԳ-ին վերաբերող իրավիճակներին: Ինչ վերաբերում է ուսուցիչներին, ապա ռեֆլեքսիան թույլ կտա նրանց արագացնել ՔԿԱԳ-ի կիրառումը:

Քննարկելով Նախագծային հարացույցը՝ աշակերտները կարող են տեսնել, որ *ամեն ինչ նախագիծ է*: Այստեղ և այս պահին մտորելով իրենց ներկա իրավիճակի մասին, նրանք կարող են հասկանալ, թե ինչ բան է իշխանության անհավասարակշռությունը: Այսպիսի ուսընկալումը (learning) սնում է նրանց քննադատական մտածողությունը: Աշակերտներին իշխանության անհավասարակշռությանը վերաբերող նյութը բացատրելուց հետո ուսուցիչը կարող է դիմել նրանց հետևյալ հարցերով. «Ինչ էք կարծում, ես ճիշտ եմ վարվում՝ շարունակելով դեկավարել ձեզ դասի ընթացքում: Կամ արդյոք հավասարակշռություն մեր դեպքում: Եթե չկա, ապա ինչ պետք է անենք՝ այն վերականգնելու համար», այսպիսով միավորելով թեման և տվյալ պահի, այստեղի և հիմա-ի կոնտեքստը, ինչը հզոր ուսուցողական միջոց է՝ տեսականն ու գործնականը միավորելու:

ՄԱՍ III.

ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՄԱԿԱՐԴԱԿԸ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԿԱԳ ՄՈԴՈՒԼՆԵՐ

Քաղաքացիական կրթությանը վերաբերող բազմազան թեմաների համար ուսումնական մոդուլներ մշակելիս կօգտագործվի կարողունակությունների ձևավորման ՔԿԱԳ մոտեցումը: Այնուհետև այդ նույն՝ կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը կկիրառվի քաղաքացիական կրթությանը «չվերաբերող» թեմաների համար: ՔԿԱԳ կարողունակությունները «ուղղահայաց» դիրք են գրավում և անցնում են քաղաքացիական կրթությանը վերաբերող (և որպես լրացուցիչ նպատակ՝ քաղաքացիականությանը «չվերաբերող») բոլոր թեմաներով: Մոդուլները կկառուցվեն այնպես, որ «հորիզոնական» թեմաներն ընդգրկեն «ուղղահայաց» (ՔԿԱԳ) կարողունակությունները: Այս մոդելը Եվրասիա համագործակցություն հիմնադրաման օգտագործել է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հետ իրականացրած և Եվրոպական միության կողմից ֆինանսավորված՝ «ԲՀ Կամուրջ»¹⁴ ծրագրի շրջանակներում: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ԲՀԿ¹⁵) պարագայում սովորաբար կիրառվում է վերապատրաստման «ուղղահայաց» ձևաչափը, որը՝ անկախ մասնակիցների մասնագիտացումից, ընդգրկում է կառավարմանը, նախագծերի մշակմանն ու իրագործմանը, ֆինանսական մենեջմենթին վերաբերող ուղղություններ: «ԲՀ Կամուրջ» ծրագրում որոշվել էր կազմակերպել ԲՀԿ-ների ուսուցումը «հորիզոնական» մակարդակում, այսինքն՝ կենտրոնանալ նրանց կարիքներից ելնող թեմաների վրա՝ երիտասարդություն, մշակույթ, գեղեր, կրթություն, սոցիալական ձեռնարկատիրություն և

14 Տե՛ս ԲՀ Կամուրջ (2017-2019) ծրագրի մասին այստեղ. <https://epfarmenia.am/hy/project/Bridge4CSOs>

15 Տե՛ս Քաղաքացիական հասարակության մասին այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Civil_society

այլն: ՔԿԱԳ պարագայում մենք առաջարկում ենք հակառակ մոտեցումը: Հայաստանյան դպրոցներում գիտելիքը մատուցվում է աշակերտներին հիմնականում «հորիզոնական» մակարդակում՝ թե՛նա առ թե՛նա: ՔԿԱԳ գաղափարը կայանում է նրանում, որ բոլոր թե՛նաների համար մշակվող մոդուլները հիմնվեն նոր սկզբունքի, կրթական նոր չափորոշիչների վրա և մինչև ժամանակ որդեգրվի «ուղղահայաց» մոտեցումը, այսինքն՝ հատուկ ուշադրություն դարձվի աշակերտների՝ ՔԿԱԳ կարողունակությունները ապահովելու վրա, քանի որ դրանց պահանջը կա ցանկացած ոլորտում և ցանկացած իրավիճակում: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ, թե՛ն ՀՀ դպրոցական համակարգի բարեփոխումներն արտացոլում են աշխարհում լայն տարածում գտած մոտեցումը, առայժմ բավարար չափով հետազոտված չէ, թե ինչպես է պետք ապահովել կարողունակությունների յուրացումը և ինչպես է պետք չափել, գնահատել դրանք, ընդ որում հետազոտված չէ ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհում: Մինչ օրս ենթադրվում էր, որ «հորիզոնական» դպրոցական ծրագրի վրա հիմնված թե՛նաներն ուսուցանելուց հետո անհրաժեշտ է չափել ձեռք բերված քաղաքացիական և ՔԿԱԳ կարողունակությունները: Այս մոտեցման հիմքում ընկած է այն պատկերացումը, որ գոյություն ունեն բազմապիսի եղանակներ, որոնց միջոցով կարելի է օգնել մարդկանց ձեռք բերել նախագծեր իրագործելու, քննադատական մտածողություն դրսևորելու և այլ կարողունակություններ: Սահմանելով այդ կարողունակությունների առանցքը՝ ՔԿԱԳ-ը մեկ քայլ առաջ է անցնում՝ այլ տեսանկյունից դիտարկելով դպրոցական բարեփոխումների մշակման սկզբունքը և գլխիվայր շրջելով «հորիզոնական» կրթության ավարտից հետո կարողունակությունները չափելու պահանջը: ՔԿԱԳ մոտեցումը ճիշտ հակառակն է. այնպես մշակել մոդուլները, որպեսզի դրանք հստակորեն, բացահայտ ձևով անդրադառնան ՔԿԱԳ կարողունակություններին և օգնեն աշակերտներին դրսևորել դրանք սովորելու ընթացքում:

Աղյուսակ 2

ՔԿԱԳ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԸՍՏ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ

Խնդրում ենք գնահատել, թե որքանով են ՔԿԱԳ կարողունակությունները հասցեագրվել ստորև բերված մոդուլներում: Օգտագործե՛ք 1-10 սանդղակը, որտեղ 1-ը նշանակում է նվազագույն աստիճանը: Եթե ցածր աստիճան է գրանցվել, մտածե՛ք, թե ինչպես է կարելի բարձրացնել այն՝ բարելավելով մոդուլը և դրա կիրառումը:

Միավորները պայմանական են, և թվային գնահատումը պարտադիր պայման չէ: Կարող եք պատասխանել բառերով և/կամ միավորել թվերն ու մեկնաբանությունները:

Աղյուսակ 2. ՔԿԱԳ զարգացումն ըստ մոդուլների

	ՔԿԱԳ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ՍՈՒԲՅԵԿՏԱՅՆՈՒԹՅՈՒՆ	ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԱՐԱՑՈՒՅՑ	ԲՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ/ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔ	ՑԱՆԿԱՑԱԾ ԱՅԼԸ
Թիվ		Թեմա					
1.	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԹԵՄԱՆՆԵՐ	Մարդու իրավունքներ (ներառյալ ենթաթեմաները)					
2.		Հակակոռուպցիա					
3.		Գենդեր					
4.		Շրջակա միջավայր					
5.		Լավ կառավարում					
6.		Քաղաքացիական հասարակություն					

	ՔԿԱԳ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍՈՒԲՅԵԿՏԱՅՆ ՈՒԹՅՈՒՆ	ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԱՐԱՅՈՒՅՑ	ԲՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ/ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔ	ՑԱՆԿԱՑԱԾ ԱՅԼԸ	
7.	Հակամարտությունների կարգավորում						
8.		Մեդիա գրագիտություն					
9.		—					
10.	ԼՐԱՑՈՒՑԻՉ ԹԵՄԱՆԵՐ	Հայաստանի կառավարման համակարգը					
11.		Տնտեսություն					
12.		Միջազգային իրավունք					
13.		Ընտրություններ					

	ՔԿԱԳ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍՈՒԲՅԵԿՏԱՅՆՈՒԹՅՈՒՆ	ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԱՐԱՑՈՒՅՑ	ԲՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ/ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔ	ՑԱՆԿԱՑԱԾ ԱՅԼԸ
14.		ՏԻՄ				
15.		—				
16.	ՆԱԽՈՐԳ ՄԱԿԱՐԳԱԿԻ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԹԵՐԻ ԼԻՆԵԼ	Գրագողություն				
17.		Առցանց հաղորդակցության հմտություններ (էլեկտրոնային նամակներ և այլն)				
18.		Այլ սոցիալական հմտություններ				
19.		Կարդալու և մեծ տեքստեր հասկանալու կարողություն				
20.		Ինքնուրույն տեքստեր գրելու կարողություն				

	ՔԿԱԳ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍՈՒԲՅԵԿՏԱՅՆ ՈՒԹՅՈՒՆ	ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԱՐԱՑՈՒՅՑ	ԲՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ/ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔ	ՑԱՆԿԱՑԱԾ ԱՅԼԸ
21.	—					
22.	Քաղաքացիական կարողունակությունները մաթեմատիկայի դասերին					
23.	Քաղաքացիական կարողունակությունները ֆիզիկայի դասերին					
24.	Քաղաքացիական կարողունակությունները գրականության դասերին					
25.	Քաղաքացիական կարողունակությունները պատմության դասերին					
26.	Եվ այլն					



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐ

ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՔԿԱԳ-ը նախատեսում է, կապակցելով տարբեր կրթական/ ուսուցման իրավիճակները, արդյունքում ներկայացնել լավագույն փորձի նմուշներ: Ստորև բերված օրինակները ցույց են տալիս, թե ինչպե՞ս են ՔԿԱԳ մոտեցման դեպքում մշակվելու մոդուլներ, ինչպե՞ս է կազմակերպվելու և փորձարկվելու գործունեությունը և ինչպե՞ս են գնահատվելու արդյունքները, որոնց հիման վրա կարելի կլինի զարգացնել հետագա աշխատանքը:

Ինչպե՞ս կապել «ուղղահայաց» և «հորիզոնական» քաղաքացիական կարողունակությունները. Օրինակ.

Հորիզոնական. Գեներեր	Հորիզոնական. Մեղիագրագիտություն	Ուղղահայաց. Քննադատական մտածողություն
Գենդերին վերաբերող դասընթացին քննարկվում է Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքը, որի դրվագներից մեկում ամուսինը ծեծում է կնոջը: Հարց. «Ո՞րն է այս պատմվածքի ամենադաժան հատվածը»:	Ըստ մամուլում հրապարակված նյութի՝ Հայաստանում գործազուրկների 45 տոկոսը 35-ից ցածր տարիքի մարդիկ են, և այդ խմբում կանանց թիվը 50 տոկոսից բարձր է: Լրագրողը, սակայն, եզրակացնում է, որ դա ցույց է տալիս, որ հայաստանցի կանայք ուրախ են լինել տնային տնտեսուհի:	Հարց Բակունցի պատմվածքի վերաբերյալ. «Մովորաբար այս պատմվածքը բնութագրվում է որպես «շատ գեղեցիկ և բանաստեղծական»: Ձեր կարծիքով, ինչու՞ է անարդարություն և դաժանություն բովանդակող դրվագ ունեցող պատմվածքն ընկալվում ընթերցողների մեծամասնության կողմից որպես գեղեցիկ և բանաստեղծական ստեղծագործություն: Մամուլի հրապարակմանը վերաբերող հարց. «Ո՞րն է լրագրողի ուղերձը: Ինչպե՞ս կարող ենք հաստատել կամ հերքել այն: Որո՞նք են այս հաղորդագրության տրամաբանական անհամապատասխանությունները»:

Ինչպե՞ս կապել ընթացիկ առարկաները / թեմաները քաղաքացիական կրթության հետ՝ կենտրոնանալով վերջինիս վրա. Օրինակ.

Առարկա. Գրականություն	Առարկա. Սոցիալական գիտություն	Թեմա. Աշխարհագրություն
Թեմա. Եղիշե Չարենց	Թեմա. մարդու իրավունքներ	Թեմա. Եվրասիա

Տեքստ. «Դանթեական առասպել»	Հարց. Ինչպե՞ս է մարդու իրավունքների ոտնահարումն արտացոլված Չարենցի պոեմում:	Տեքստ. Սիբիր: Հարց. Ինչպե՞ս կարող եք ներկայացնել մարդու իրավունքների ոտնահարումն այն իրավիճակում, երբ Սիբիրն օգտագործվում է որպես արքայազնի պատրավայր
----------------------------	---	---

Ինչպե՞ս կապել թեմաները և քաղաքացիական կրթությունը (հորիզոնական). Օրինակ. ա)

Թեմա. Լավ կառավարում	Թեմա. Հայաստանի կառավարման համակարգ
Հարց. «Ինչ եք կարծում, Հայաստանի կառավարման համակարգի աշխատանքը բավարար թափանցիկ է: Ինչպե՞ս է կարելի այն ավելի թափանցիկ դարձնել»:	Հարց. «Ձեր կարծիքով, որո՞նք են ՀՀ կառավարման համակարգում առկա թերությունները: Արդյո՞ք այդ թերությունները վերացնելու դեպքում ՀՀ կառավարման համակարգն ավելի կհամապատասխանի լավ կառավարման սկզբունքներին»:

Օրինակ. բ)

Թեմա. Գենդեր	Թեմա. Շրջակա միջավայր	Ընթերցելու նյութ. Լուսինե խառատյանի «Ղարսի թակարդը» պատմվածքը
Հարցեր. «Որո՞նք են տվյալ պատմվածքի գենդերային կողմերը: Ձեր կարծիքով, արդյո՞ք գենդերային դերերն արդարացի են բաշխված»:	Հարցեր. «Ինչ կապ կա բնապահպանական և գենդերային խնդիրների միջև: Ինչ եք կարծում, բնապահպանական խնդիրներն ազդե՞լ են գենդերային խնդիրների վրա, ինչպե՞ս ներկայացված է պատմվածքում»:	Եզրափակիչ քննարկում. «Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող եք փոխել պատմվածքում ներկայացված իրավիճակները, որպեսզի գենդերային և բնապահպանական խնդիրներն այլևս բացասաբար չազդեն միմյանց վրա: Ինչ այլ թեմաների է պետք անդրադառնալ (օրինակ՝ հակամարտությունների կարգավորում, միջազգային հարաբերություններ, սոցիալական վարքագծի նորմեր, աղքատություն և այլն):

Ինչպէն կապել առարկաները/թեմաներն արտադասարանային գործունեությանը. Օրինակ.

Ուսումնական ծրագիր. հասարակագիտություն	Արտադասարանական առաջադրանք
Թեմա. Շրջակա միջավայր	Քաղաքային զբոսայգու մաքրում:

Ինչպէն կապել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական գործունեությունները. Օրինակ.

Ֆորմալ	Ոչ ֆորմալ
Թեմա. ՏԻՄ ¹⁶	Երիտասարդական խմբի ջանքերով տեղի գրադարանը երիտասարդական կենտրոն դարձնելու հարցն ընդգրկվել է ՏԻՄ օրակարգում:
Կապ. Երիտասարդական խմբի ակտիվ անդամներն այցելում են դպրոց և ներկայացնում են իրենց գաղափարը:	Կապ. Աշակերտները միանում են ստորագրահավաքին, առաջարկում են շահերի պաշտպանության լրացուցիչ միջոցներ, հարցը ներկայացնում են դպրոցի խորհրդին, մասնակցում են ՏԻՄ խորհրդի նիստին և արտահայտում են իրենց կարծիքը:

Ինչպես կապել ուսուցիչների մոդուլները և աշակերտների ուսումնական նյութը. Օրինակ.

Թեմա. Քաղաքացիական հասարակություն	Ուսումնական նյութ
Ուսուցիչ մոդուլ. Ինչպես բացատրել, թե ինչ է քաղաքացիական հասարակությունը և ինչն է այն տարբերվում շահույթ հետապնդող, քաղաքական կարիերային և/կամ հարազատներին օգնելուն ուղղված գործունեությունից:	Ուսումնական նյութ. Իզաբելլա Մարգայանի՝ Հայաստանի քաղաքացիական հասարակության պատմությանը նվիրված դասախոսությունը ¹⁷ :
Իրականացման եղանակ. Նյութի ներկայացում և բանավեճ. «Արդյո՞ք բարեգործությանը մասնակցելը քաղաքացիական հասարակության գործառույթ է»:	Տեսային աշխատանք. Հարցազրույց վերցնել Մաշտոցի պուրակի շարժման անդամներից և խնդրել, որ նրանք պատմեն, թե ինչ են արել՝ հաջողության հասնելու համար:

16 Տես Տեղական ինքնակառավարման մարմինների մասին այստեղ. <http://mes.am/hy/the-lsg/>

17 Տես «Քաղաքացիական հասարակությունը 2018-ից առաջ և հետո. թիրախավորում և մարտահրավերներ» դասախոսությունը այստեղ. <https://www.youtube.com/watch?v=v1GXlxsOCc>

Ինչպէն կապել ուսուցիչների մոդուլները և «ուսուցիչների ուսուցման» մոդուլները. Օրինակ.

Թեմա. Հանդուրժողականությունը որպես արժեք	Ուսումնական նյութ
«Ուսուցիչների ուսուցման» մոդուլ. ինչո՞վ են տարբերվում բարի լինելը, հանդուրժողական լինելը, անտարբեր լինելը և «հավասարակշռված» լինելը:	Մանկավարժական պրակտիկա, փորձնական շրջան անցնող կամ սկսնակ ուսուցիչները (Հայ գրականություն). Էսսե. «Ո՞րն է տարբերությունը «Սասնա ծռեր» էպոսում ներկայացված մեծահոգի պահվածքի և Նար-Դոսի կարճ պատմվածքներում արտահայտված հանդուրժողականության/անհանդուրժողականության միջև» թեմայով:
Ուսումնական նյութ. «Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ» ժողովածուն ¹⁸ :	Մանկավարժական պրակտիկա, փորձնական շրջան անցնող կամ սկսնակ ուսուցիչները մշակում են մոդուլ, որի նպատակն է գրականության դասերին անդրադառնալ հանդուրժողականության և անհանդուրժողականության թեմաներին՝ հենվելով 19-րդ դարի հայ գրականության վրա:

Ինչպէն կապել սովորած նյութի գնահատումը կարողունակությունների վրա հիմնված քաղաքացիական ուսուցման մեթոդներին (մասնավորապես՝ ՔԿԱԳ-ին). Օրինակ.

Առարկա. Պատմություն	Մեթոդ. Շրջայց քաղաքում	Թեմա. Էսսե (ձեռագիր, շուրջ 3 էջ, գրվում է դասարանում)
Թեմա. Արդյունաբերացումը (ինդուստրիալիզացիան) 20-րդ դարում:	Դասախոսություններ և քննարկումներ Վանաձոր քաղաքի արդյունաբերական օբյեկտների այցելության շրջանակներում:	Գրել էսսե/վերլուծական ակնարկ՝ բացատրելով, թե ինչ պատճառով դադարեցին աշխատել Վանաձորի քիմիական արդյունաբերության հսկաները և նշելով այդ երևույթի դրական և բացասական կողմերը: Ինչ կանեիք այդ լքված կառույցների հետ: Առաջնային նշանակության կարողությունների ստուգում. ա) վերլուծելու և քննադատական մտածողության կարողություններ. բ) գիտելիքի պաշար, դասերի ընթացքում չներկայացված՝ լրացուցիչ նյութերից/տեղեկատվությունից օգտվելու կարողություն. գ) սուբյեկտայնության ու նախագծային հարացուցիչ վերաբերող կարողունակություններ (երկրորդական կարևորության մակարդակ): Հմտությունների ստուգում. վերլուծական էսսե գրելու կարողություն (բոլոր առումներով), սովորելու ունակություն, սովորած նյութը ռեֆլեքսիայի ենթարկելու կարողություն:

18 Տե՛ս «Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ» ժողովածուն այստեղ. <https://epfarmeria.am/hy/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature>

Ինչպէն կապել ուսուցողական օրագիրը ընթացիկ ուսումնական նյութին. Օրինակ.

Ուսուցողական օրագրեր	Ուսումնական նյութ՝ օպտիկա
<p>Աշակերտն ունի ուսուցողական օրագիր, որտեղ նա ազատ ոճով արտացոլում է այն, ինչ անցել է շաբաթվա ընթացքում: Աշակերտներին խորհուրդ է տրվում փորձել կապել անցած նյութն իրենց անմիջական միջավայրի հետ, և հնարավորության պարագայում նշել, թե ինչպես են իրենց մտքերը/ոեֆլեքսիան կապվում ՔԿԱԳ հետ:</p>	<p>Ուսուցիչը խնդրում է, որ աշակերտներն արտացոլեն իրենց օրագրերում օպտիկայի հետ կապված սեփական փորձը (ակնոցներ, հեռադիտակներ և այլն): Աշակերտի պապիկն ակնարայթ է եղել, և նրան առաջարկվում է հարցափորձ անել պապիկին նրա մասնագիտության մասին և գրառումներ կատարել: Հարցազրույցի ընթացքում պարզվում է, որ մինչև ակնարայթ դառնալը պապիկը վստահ էր, որ կարճատեսություն ունեցող մարդկանց աչքերը հավասարաչափ կարճատես են, և այն փաստը, որ մարդու աչքերը կարող են տարբեր տեսողություն ունենալ, նրա համար կարևոր անձնական հայտնագործություն էր: Այս օրինակը ցույց է տալիս, որ տվյալներն ու ապացույցները կարող են հակասել սուբյեկտիվ համոզմունքին:</p>

Ինչպէն կապել նախորդ մակարդակի կարողունակություններն ավելի բարձր մակարդակի կարողունակություններին (կամ լրացնել այդ կարողունակություններում տեղ գտած բացերը). Օրինակ.

Նախորդ մակարդակի կարողունակություն. Ինչ է գիտությունը	Ավելի բարձր մակարդակի կարողունակություն. Հետազոտական նախագծի մշակում
<p>Հետազոտական նախագիծ մշակելուն նվիրված դասընթացի ժամանակ պարզվում է, որ աշակերտները չեն տարբերակում գիտականն ու ոչ գիտականը (այն է՝ կարծիք, ավանդական տեսակետ, կրոնական հայացք կամ աշխարհայացք և այլն):</p>	<p>Ուսուցիչը բացատրում է հետազոտական նախագծի մեթոդի կարևորությունը. այն պիտի այնպես հիմնավորված լինի, որ հնարավոր լինի, որ ուրիշները հետազոտությունը կրկնեն նույն մեթոդով և երկու հետազոտությունների արդյունքները համընկնեն կամ հակասեն միմյանց: Սակայն հասկանալով, որ աշակերտները դժվարանում են տարբերել հավաստի արդյունքները հետազոտության ներքին կառուցվածքային տրամաբանությունից, ուսուցիչը սկսում է քննարկել, թե ինչով է գիտական մոտեցումը տարբերվում այլ մոտեցումներից:</p>

«Ֆրակտալ» մոտեցում. ինչպե՞ս փոխել դպրոցի կառավարման համակարգը՝ համապատասխանեցնելով այն քաղաքացիական կրթության (ՔԿԱԳ) սկզբունքներին և կապելով Սուրբեկտայնությանն ու շրջակա միջավայրին. Օրինակ.

1.	ՔԿԱԳ-ը ներկայացնել դպրոցի խորհրդին:
2.	Օգնել դպրոցի խորհրդին փոփոխել իր գործունեության կանոնները՝ համապատասխանեցնելով դրանք ՔԿԱԳ մոտեցմանը:
3.	Ի հայտ բերել այն խնդիրները, որոնք քաղաքական որոշման կարիք ունեն, և ներկայացնել դրանք քաղաքական որոշում կայացնողներին:
4.	Սատարել փոփոխությունների իրագործմանը դրանց իրագործման ամբողջ ընթացքում:
5.	Իրականացնել փոփոխությունները:
6.	Ներգրավել/քաջալերել աշակերտներին և ծնողներին:
7.	Օգտագործել այդ գործընթացը որպես օրինակ՝ քաղաքացիական կրթության շրջանակներում կազմակերված համապատասխան դասընթացներին:

Հակառակ ուղղություն. ինչպե՞ս հարստացնել ակտիվ երիտասարդների քաղաքացիական գիտելիքը (ինչպես լրացնել ֆորմալ կրթության բացերը). Օրինակ.

1.	Ներկայացնել ՔԿԱԳ մոտեցումը ակտիվ երիտասարդներին:
2.	Համեմատաբար հեշտ հարցաշարերի (քուիզ) և այլ միջոցների օգնությամբ ի հայտ բերել ակտիվ երիտասարդների գիտելիքի բացերը (քաղաքացիական կրթության առումով):
3.	Ակտիվ երիտասարդների (կամ նրանց հետ) նախաձեռնած նախագծերի մեջ ընդգրկել գիտելիքի փոխանցման գործողություններ/հարթակներ:

4.	Կենտրոնանալ մարդու իրավունքներին, գենդերին, շրջակա միջավայրին, լավ կառավարմանը, հակակոռուպցիային, հայկական պետությանը, միջազգային իրավունքին և այլ կարևոր հարցերին վերաբերող գիտելիք փոխանցելու վրա: ¹⁹
5.	Մշակել երիտասարդների հետ այնպիսի նախագծեր, որոնցում «Էլիասվեն» ՔԿԱԳ «հորիզոնական» և «ուղղահայաց» կարողունակությունները:
6.	Նախագծի ավարտին ստուգել # 4 -ում թվարկված թեմաների վերաբերյալ ձեռք բերված գիտելիքի, ընկալման և կարողունակության մակարդակը:
7.	Կազմակերպել բանավեճեր դպրոցի աշակերտներից և ակտիվ երիտասարդներից բաղկացած թիմերի միջև 4-րդ կետում տեղ գտած թեմաներով:

19 Այս նպատակով Եվրասիա համագործակցություն հիմնադրամը տարիներ շարունակ դիմել է հանրային դասախոսությունների մեթոդին (տես կազմակերպության «Jam Sessions» խորագիրը. <https://epfarmeria.am/hy/Jam-Session>)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՒՑ ՑԱՆԿ

- Biemans, H., Nieuwenhuis, L., Poell, R., Mulder, M. and Wesselink, R. (2020). Making sense of K-12 competency-based education: A systematic literature review of implementation and outcomes research from 2000 to 2019. *Journal of Vocational Education and Training*, [online] 56(4). Available at: <https://www.tandfonline.com/doi/pdf/10.1080/13636820400200268?needAccess=true> [Accessed 20 Dec. 2006].
- Clément, P. (2020). The introduction of competence-based education into the compulsory school curriculum in France (2002–2017): hybridity and polysemy as conditions for change. *Journal of Vocational Education and Training*, [online] 57(1), pp.35–50. Available at: <https://www.tandfonline.com/doi/full/10.1080/03050068.2020.1845062?scroll=top&needAccess=true> [Accessed 19 Aug. 2021].
- Nordinhttps, A. and Sundberghhttps, D. (2020). Transnational competence frameworks and national curriculum-making: the case of Sweden. *Comparative Education*, [online] 57(1), pp.19–34. Available at: <https://www.tandfonline.com/doi/epub/10.1080/03050068.2020.1845065?needAccess=true> [Accessed 19 Aug. 2021].
- K.J. Baartman, L., J. Bastiaens, T., A. Kirschner, P. and P.M. van der Vleuten, C. (2007). Evaluating assessment quality in competence-based education: A qualitative comparison of two frameworks. *Educational Research Review*, (2), pp.114–129.
- Council of Europe (2020). Reference Framework of Competences for Democratic Culture: Volume 3 - Guidance for implementation (in Armenian). [online] Council of Europe. Council of Europe. Available at: <https://rm.coe.int/arm-reference-frameworkvol-3/1680a1b758> [Accessed 17 Aug. 2021].
- Council of Europe (2020). Reference Framework of Competences for Democratic Culture: *Volume 1* - Context, concepts and model (in Armenian). [online] Council of Europe. Council of Europe. Available at: <https://rm.coe.int/prems-000821-arm-2510-reference-frameworkvol-1-couv-texte-16x24-web/1680a1b757> [Accessed 17 Aug. 2021]
- Council of Europe (2020). Reference Framework of Competences for Democratic Culture: *Volume 2* - Descriptors of competences for democratic culture (in Armenian). [online] Council of Europe. Council of Europe. Available at: <https://rm.coe.int/armreference-frameworkvol-2/1680a1bc83> [Accessed 17 Aug. 2021].

- Council of Europe (2020). Reference Framework of Competences for Democratic Culture: *Volume 3* - Guidance for implementation (in Armenian). [online] Council of Europe. Council of Europe. Available at: <https://rm.coe.int/arm-reference-frameworkvol-3/1680a1b758> [Accessed 17 Aug. 2021].
- Kaufman, J. (2010). *The Personal MBA: Master the Art of Business*. Toronto, Canada: Portfolio / Penguin. Brown, P.C., Roediger III, H.L. and McDaniel, M.A. (2019). *Make It Stick: The Science of Successful Learning*: Peter C. Brown, Henry L. Roediger III, Mark A. McDaniel: 4708364242277: Amazon.com: Books. [online] Amazon.com. Available at: <https://www.amazon.com/Make-Stick-Science-Successful-Learning/dp/0674729013> [Accessed 23 Aug. 2021].

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) տեսլականն է նպաստել նրան, որ Հարավային Կովկասը կայանա որպես խաղաղ, հակամարտություններից զերծ և համագործակցող տարածաշրջան, և աչքի ընկնի քաղաքացիների ներգրավման բարձր մակարդակով, սոցիալապես պատասխանատու ձեռներեցությամբ ու կայուն, պատասխանատու և արդյունավետ քաղաքացիական հասարակությամբ: ԵՀՀ-ն տարիներ շարունակ աշխատում է քննադատական մտածողության և այլընտրանքային կրթության մեթոդների ասպարեզում: Այն համախմբում է մտածողության առաջնորդների, հասարակական ոլորտի գործիչների, որոնք ունեն բարձր մոտիվացիա և իրենց ամենօրյա գործունեության մեջ կոտրում են կարծրատիպերը և նպաստում հայաստանյան հասարակության համար զարգացման ճիշտ ուղիներ մշակելուն: Որպես «մտագործող» («think and do tank») կառույց, որն աշխատում է քաղաքականությունների մշակումից մինչև դրանց իրագործում, և որի առաքելությունն ու գործունեությունը ծածկում է քաղաքացիական հասարակության գործունեության և պետական բարեփոխումների շատ կարևոր հատվածը, ԵՀՀ-ն առաջնահերթություն է համարում հասարակության մեջ խթանել քննադատական մտածողության օրակարգը:

Eurasia Partnership Foundation's (EPF) guiding vision is a South Caucasus that is peaceful, conflict free and cooperative with civically engaged citizens, socially responsible businesses, and sustainable, accountable and effective third sector organizations. EPF works on critical thinking issues and alternative education methods for many. EPF unites a team of highly motivated civil society and thought leaders and public figures, who dismantle the stereotypes in their daily activities and participate in building the correct development path for Armenia. As a 'think and do tank', which works the full circle, from policy advice to implementation, and whose remit covers a very significant part of civil society and state reform, EPF considers it a priority to boost the critical thinking agenda in Armenia.

«ԵՀՀ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԽՈՐԱԳՐԻ ՆԵՐՔՈ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ

- Արմենիա 3.0. հասկանալ 20-րդ դարի Հայաստանը (անգլերեն), 2020, <https://epfarmeria.am/hy/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia>
- Այժմեական գիտելիք շահերի արդյունավետ պաշտպանության համար. ձեռնարկ, 2019, <https://epfarmeria.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs>
- Բռնության մշակույթը Հայաստանում, 2020, <https://epfarmeria.am/hy/document/Culture-of-Violence-in-Armenia>
- Բռնության մշակույթը Հայաստանում. անդրադարձ և առաջարկներ, 2020, https://epfarmeria.am/sites/default/files/Document/Roots_of_violence_recommendations_online_version.pdf?fbclid=IwAR0hBXN5-TSJbZq-vOrmvmXD1QpZIkWuEjtzCUU92MuOZ1KF5LVGrq7qZ7M
- Գենդերային մեյնսթրիմինգը քաղաքականության մեջ. ձեռնարկ դասընթացավարների համար, <https://epfarmeria.am/hy/document/DATA-Manual-for-Trainers-Mainstreaming-Gender-into-Policies>
- ԵՀՀ կրթություն և ուսուցում, 2021, <https://epfarmeria.am/hy/document/EPF-Education-and-Learning>
- ԵՀՀ գենդերային քաղաքականությունը. տեսական հիմնահարցեր, 2021, <https://epfarmeria.am/hy/document/EPF-Gender-Policy>
- ԵՀՀ-ն և մշակույթը, գրականությունն ու արվեստը (անգլերեն), 2018, <https://epfarmeria.am/document/EPF-Culture-Literature-Art>
- Խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների անդամների համար նախատեսված ձեռնարկ, 2021, <https://epfarmeria.am/hy/document/Handbook-for-Guardianship-and-Trusteeship-bodies-2021>
- Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության վերաբերյալ հետազոտություն, 2020, <https://epfarmeria.am/hy/document/Research-On-Custody-and-Guardianship-Authorities>
- Կրոնի կամ հավատքի ազատության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանում, Վրաստանում և դրանից դուրս: Համաժողովի հաշվետվություն (անգլերեն), 2019, <https://epfarmeria.am/document/EPF-FoRB-2019-Report>

- Հետազոտություն ՀՀ-ում վեճերի այլընտրանքային լուծման ոլորտի վերաբերյալ, 2020, <https://epfarmeria.am/hy/document/Research-on-Alternative-Dispute-Resolution-in-Armenia>
- Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները, 2020, <https://epfarmeria.am/hy/document/Issues-Related-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia>
- Հարաբերություններ առանց շփումների, 2020, <https://epfarmeria.am/hy/document/Relations-without-Interactions>
- Հայաստանը և տարածաշրջանը, 2019, https://epfarmeria.am/hy/document/Armenia_and_the_Region
- Հրատարակչական գործընթացի ուղեցույց, 2019, <https://epfarmeria.am/hy/document/publication-algorithm>
- Համակարգված մտազործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր, 2018, <https://epfarmeria.am/hy/document/MSTA-Creative-Game>
- Հասարակություն և տեղական ինքնակառավարում. Կազմակերպագործունեական խաղի արդյունքները, 2018, <https://epfarmeria.am/hy/document/OAS-Highlights-CELoG-2018>
- Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, 2017, <https://epfarmeria.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature>
- Պրոբացիայի ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում. Մաս 1, 2020, <https://epfarmeria.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA>
- Սոցիալական հետազոտության էթիկական ուղենիշներ. կիրառական ուղեցույց, 2021, <https://epfarmeria.am/hy/document/DATA-research-ethics-manual-socies-2021>
- Ուղեցույց. Հանրային խնդրից մինչև քաղաքականության մշակում, <https://epfarmeria.am/hy/document/DATA-Guide-From-public-issue-to-policy-development>
- Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հոետորաբանական շեղող կիրառուկներ, 2019, <https://epfarmeria.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>

PUBLICATIONS UNDER THE ‘EPF UNIVERSITY’ HEADING

- Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. (2020) <https://epfarmeria.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia>
- Armenia and The Region (in Armenian). (2019) https://epfarmeria.am/hy/document/Armenia_and_the_Region
- About the Methodology of Systemic Thought Activity (MSTA) and Creative Games. (2018) <https://epfarmeria.am/document/MSTA-Creative-Game>
- Culture of Violence in Armenia (in Armenian). (2020) <https://epfarmeria.am/hy/document/Culture-of-Violence-in-Armenia>
- Culture of Violence in Armenia. Reflection and recommendations (in Armenian). (2020) <https://epfarmeria.am/hy/document/Roots-of-Violence-in-Armenia-recommendations>
- Contemporary Issues of Freedom of Religion or Belief in Armenia, Georgia and Beyond. Conference Report. (2019) <https://epfarmeria.am/document/EPF-FoRB-2019-Report>
- Critical Thinking: Logical Fallacies and Misleading Rhetorical Tricks (in Armenian). (2019) <https://epfarmeria.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>
- Culture, Literature and Art. (2018) <https://epfarmeria.am/document/EPF-Culture-Literature-Art>
- EPF Education and Learning. (2021) <https://epfarmeria.am/document/EPF-Education-and-Learning>
- EPF Gender Policy. (2021) <https://epfarmeria.am/document/EPF-Gender-Policy>
- Ethical Guidelines for Social Research (in Armenian). (2021) <https://epfarmeria.am/hy/document/DATA-research-ethics-manual-socies-2021>
- Guide: From public issue to policy development (in Armenian) ` <https://epfarmeria.am/hy/document/DATA-Guide-From-public-issue-to-policy-development>
- Handbook for Guardianship and Trusteeship Bodies (in Armenian). (2021) <https://epfarmeria.am/hy/document/Handbook-for-Guardianship-and-Trusteeship-bodies-2021>

- Issues Related to the Rights of and Opportunities for Yezidi Girls Residing in Armenia. (2020) <https://epfarmeria.am/document/Issues-Related-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia>
- Manifestations of Tolerance and Intolerance in Armenian Literature (in Armenian). (2018) <https://epfarmeria.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature>
- Manual for Trainers Mainstreaming Gender into Policies (in Armenian) <https://epfarmeria.am/hy/document/DATA-Manual-for-Trainers-Mainstreaming-Gender-into-Policies>
- Publishing Guide (in Armenian). (2019) <https://epfarmeria.am/hy/document/publication-algorithm>
- Present-day knowledge for effective advocacy (in Armenian). (2019) <https://epfarmeria.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs>
- Research on Alternative Dispute Resolution in Armenia. (2020) <https://epfarmeria.am/document/Research-on-Alternative-Dispute-Resolution-in-Armenia>
- Research On Custody and Guardianship Authorities in Armenia (in Armenian). (2020) <https://epfarmeria.am/hy/document/Research-On-Custody-and-Guardianship-Authorities>
- Relations Without Interactions. (2020) <https://epfarmeria.am/document/Relations-without-Interactions>
- Society and Local Self-Governance. Conclusions and Recommendations from Organizational Activity Seminar. (2018) <https://epfarmeria.am/document/OAS-Highlights-CELoG-2018>
- The Probation Service in the Republic of Armenia. Part 1 (in Armenian). (2020) <https://epfarmeria.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA>

**Towards a Civics Advancement Measurement Tool/
*Gevorg Ter-Gabrielyan, Eurasia Partnership Foundation,
2021.-64 pages***



This text presents the Civics Competence Rapid Launch (CCRL) checklist draft. CCRL focuses on four core competences: Agency or the ‘Strategic Who’, Critical Thinking, the Project Paradigm, and Civics Proper. The aim of CCRL is to facilitate the adoption of these competences primarily in the formal education sponsored by the state. The text will be useful to teachers, future teachers, high grade students, parents, teacher trainers, state and non-state educational institutions and RA Ministry of Education, Science, Culture and Sports.

Contributed by: *Lusine Kharatyan; Narek Manukyan; Mikayel Hovhannisyan; Diana Shahbazyan; Nane Paskevichyan, Nune Dilanyan (translator)*



This publication is a part of the series of manuals published under the “EPF University” heading. This publication is a part of Education, methodology of history, culture and values (EMHCV) direction. The series include texts which belong to four large thematic directions:

Critical Thinking (CT)

War and Peace (WP)

Civil Society (CS)

Education, methodology of history, culture and values (EMHCV)

See the English version here:

<https://epfarmeria.am/document/The-Civics-Competence-Rapid-Launch-Checklist>

© Eurasia Partnership Foundation, 2021

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ
ԳՈՐԾԻՔԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ**

**TOWARDS A CIVICS ADVANCEMENT
MEASUREMENT TOOL**

Էջադրումը և գրքի ձևավորումը՝
Տաթև Եսայանի
Լուսինե Դավթյանի

Չափսը. 16.5x24
Տառատեսակը. GHEA Mariam

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
Ազատության պող. 1/21, բն. 23, 0037, Երևան
www.epfarmeria.am

Ուրախ կլինենք ստանալ ձեր կարծիքը ձեռնարկի
վերաբերյալ հետևյալ էլ. հասցեով.
info-epf@epfound.am

Please send your comments / feedback to
info-epf@epfound.am